# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾՈՎԱԳՅՈՒՂ ԳՅՈՒՂԻ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## 2023-2028ԹԹ.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....................4
1. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ....................6
1.1. Ուսումնական հաստատության գործունեությունը՝ ըստ կրթական կարիքների բավարարման ուղղությունների....................10
1.2. Դպրոցի գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին....................12
1.3. Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը....................15
1.4. Հաստատության գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր....................18
2. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ....................19
3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ....................28
4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ....................36
4.1. Համագործակցության շրջանակներում ընթացիկ և ակնկալվող աշխատանքներ....................39
5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ....................43
5.1. Հաստատությունում հավասարության և ներառական կրթության ապահովումը....................44
5.2. Առանց հալածանքի, օտարման և բռնության միջավայր....................47
6. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ....................50
7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ....................56
8. ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ....................66
9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ....................68
10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔ....................69
11. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ....................74
11.1. Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները....................75
11.2. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները....................75
Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները....................75
Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները....................75
12. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ....................108
13. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ, ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ....................109
14. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈւԹՅՈւՆ....................113

15. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈւԹՅՈւՆԸ....................................................................................114
ԱՄՓՈՓՈՒՄ ..................................................................................................................................................114
14. ԼՈւՍԱՆԿԱՐՆԵՐ ՄԵՐ ԱՌՕՐՅԱՅԻՑ ...........................................................................................116

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ 24փ․5-րդ նրբ. շ 70

Հեռախոսահամար՝ 077-25-35-22

Էլ․ հասցեն՝ tsovagyugh@schools.am

Ինտերնետային կայքի հասցեն՝ tsovagyugh.schoolsite.am

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի «22» սեպտեմբերի 2022թ. «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» N35-ն հրամանի պահանջներին համապատասխան:

Դպրոցը ազգային և համամարդկային արժեքների փոխանցողը պետք է լինի: Ըստ «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի»՝ ազգային դպրոցը կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն է, քանի որ պետության զարգացման և հզորացման գրավականը դպրոցն է:

Յուրաքանչյուր դպրոց, հենվելով իր գործունեությունից բխող իրավական ակտերի պահանջների վրա, պետության նախանշած կրթական քաղաքականության մաս կազմելով, հաշվի առնելով դպրոցի, համայնքի և պետության կարիքներն ու մարտահրավերները, դպրոցի առանձնահատկություններն ու ներուժը, պիտի նախանշի իր նպատակները, խնդիրներն ու առաքելությունը, կանխատեսի բարեփոխումների իրականացման իր տեսլականը, խնդիրների լուծման գործընթացին առնչվող երևույթների և տարրերի միջև առկա պատճառ-հետևանքային կապերը, հստակեցնի լուծումների իրատեսական քայլաշարը: Այս ամենն իր արտացոլումն է գտնում ուսումնական հաստատության զարգացման ծրագրում:

Ուսումնական հաստատությունը տվյալ համայնքում չպետք է լինի սոսկ պետական պատվերի իրականացնող, այլ համայնքը կազմակերպող ակտիվ կենտրոն՝ հաստատություն, ուր կրթական գործընթացի յուրաքանչյուր մասնակից դառնում է ընդհանուր գործով մտահոգվող, դպրոցական արժեհամակարգ և մասնակցային մշակույթ կրող:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը մշակված է «Հանրակրթության մասին ՀՀ օրենքի» 12-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

Դպրոցի զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են․

1․ Դպրոցի նախորդ տարիների ներքին գնահատման հաշվետվությունները:

2․ ՀՀ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը:

3․ Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:

4․ Դպրոցի կանոնադրությունը:

5․ Դպրոցի մանկավարժական համակազմի ձեռքբերումները:

6․ Դպրոցում առկա հիմնախնդիրները:

Սույն զարգացման ծրագիրը նախասահմանում է 2023-2028 թթ դպրոցի զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական, կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված դպրոցի ինքնազարգացման ներուժը և Ծովագյուղ բնակավայրի կարիքները:

Դպրոցի առաքելությունն է.

Նախաձեռնող, ստեղծագործող, կարողունակ, մրցունակ ու քաղաքակիրթ քաղաքացու ձևավորումը:

Ծրագրի ռազմավարական ուղղություններն են.

1. Մասնակցային, աշակերտակենտրոն և ներառական կրթական միջավայրի ստեղծում:

2. Կրթության որակի բարձրացում:

Ծրագրի հիմքում ընկած են հետևյալ արժեքային սկզբունքները.

1. Դեմոկրատական, մասնակցային մշակույթի ձևավորում:

2. Մարդակենտրոնություն որոշումներ կայացնելիս:

3. Ուսումնական հաստատության ինքնավարության, ակադեմիական ազատությունների, հանրային հաշվետվողականության և թափանցիկության ապահովում:

# 1. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական մեկ կամ մի քանի ընդհանուր՝ այդ թվում հոսքային կամ առանձին առարկաների խորացված ուսուցման հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է: Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (այսուհետ՝ հիմնադիր):

Դպրոցի հասցեն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնք, Ծովագյուղ 24-րդ փ. 5-րդ նրբ. 70 շ.:

Դպրոցն ունի բանկային հաշիվ և ինքնուրույն հաշվեկշիռ:

Դպրոցն ունի պաշտոնական կայք, որտեղ հրապարակվում են դպրոցի ֆինանսական հաշվետվությունները, նախահաշիվը, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերի մասին հայտարարությունները և այլ տեղեկություններ:

Դպրոցն ըստ կրթական մակարդակների իրականացնում է առաջին / 1-4-րդ դասարաններ/, երկրորդ / 5-9-րդ դասարաններ/ և երրորդ / 10-12-րդ դասարաններ/ աստիճանի հանրակրթական ծրագրեր:

- Հանրակրթական ծրագրի իրականացման 1-ին աստիճան՝ 300 տեղով գործունեության լիցենզիա՝ Սերիա Ա N 0443, տրված 13.07.2010թ., լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ:
- Հանրակրթական ծրագրի իրականացման 2-րդ աստիճան՝ 400 տեղով գործունեության լիցենզիա՝ Սերիա Ա N 0434, տրված 13.07.2010թ., լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ:
- Հանրակրթական ծրագրի իրականացման 3-րդ աստիճան՝ 230 տեղով գործունեության լիցենզիա՝ Սերիա Ա N 0356, տրված 13.07.2010թ., լիցենզիայի գործողության ժամկետը՝ անժամկետ:

Դպրոցի աշխատողների թիվը՝ 71

Դպրոցում աշխատում է 50 ուսուցիչ

Դպրոցի աշակերտների թիվը՝ 555

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից

Ծնողական խորհուրդը կազմված է 23 անդամից

Աշակերտական խորհուրդը 13 անդամից:

Խորհրդակցական մարմիններն ունեն աշխատանքային պլաններ, կանոնադրություն, գործում են օրենքով սահմանված իրենց իրավասության սահմաններում: Դպրոցը գործում է հնգօրյա աշխատանքային ռեժիմով, 1 հերթով, դասերի սկիզբը՝ ժ. $9^{00}$-ին:

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով: Ստեղծել այնպիսի ուսումնառության համակարգ, որը համապատասխանում է պետական պահանջներին և սովորողներին ապահովում է անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, արժեքային համակարգով, դիրքորոշումներով ու որակներով՝ միաժամանակ հնարավորություն ընձեռնելով նրանց սովորելու ամբողջ կյանքի ընթացքում:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է մարդասիրության, ժողովրդավարության, հանրամատչելիության, անձի ազատ զարգացման, թափանցիկության, ինքնավստահության, ազգային և համամարդկային արժեքների զարգացման սկզբունքի վրա:

Ուսումնական հաստատությունն իր գործունեությունը իրականացնում է ղեկավարվելով «Երեխաների պաշտպանության մասին» ՀՀ Օրենքի համապատասխան դրույթներով. համաձայն որի՝ դպրոցը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ երեխայի անհատականության դրսևորման, տաղանդի, մտավոր և ֆիզիկական ունակությունների զարգացման համար, և յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ստանալու միջնակարգ անվճար կրթություն:

Դպրոցում իրականացվում են արտադպրոցական, մանկապատանեկան, մշակութային, մարզական, հանգստի և առողջության ամրապնդմանն ուղղված տարաբնույթ միջոցառումներ:

Դպրոցում երեխայի ուսուցումն ու դաստիարակությունն իրականացնող անձանց ու երեխայի փոխհարաբերություններն իրականացվում են փոխադարձ հարգանքի հիման վրա:

Երեխայի պատվի և արժանապատվության դեմ ոտնձգություն կատարած յուրաքանչյուր անձ, ներառյալ ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները, երեխայի դաստիարակությունը և ուսուցումն իրականացնող այլ անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուսումնական հաստատությունն անվերապահորեն հետևել և հետևելու է, որպեսզի պաշտպանված լինեն երեխաների բոլոր իրավունքները, ինչպես միշտ հետագայում ևս դասղեկները և դասավանդող ուսուցիչները տնօրենությանը պարբերաբար տեղեկացնելու են աշակերտների հոգեկան և ֆիզիկական դրություններից, արվելու է ամեն բան՝ աշակերտներին ցանկացած բռնությունից զերծ պահելու համար:

Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարելու դպրոցը.

ՈՒսուցման և դաստիարակության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել մասնագիտորեն կողմնորոշված, քաղաքացիական գիտակցությամբ օժտված, համակողմանիորեն զարգացած, պետականության, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված, ինքնասպասարկման ունակություններ ունեցող, ինքնուրույն կյանքին պատրաստ քաղաքացի:

Ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ ծրագրի իրականացման համար.


Մարդկային ռեսուրսներ
Առողջ սովորողներ
Հոգատար ծնողներ
Մասնագիտական որակներին համապատասխան մանկավարժներ
Աշխատանքի կառավարումը իրականացնող վարչական անձնակազմ
Ուսումնաօժանդակ անձնակազմ


Նյութական ռեսուրսներ
Լաբորատոր սարքավորումներ, նյութեր՝ այդ թվում էլեկտրոնային
ՀՊՉ-ներ, առարկայական ծրագրեր, դասագրքեր
Տեղեկատվական տեխնոլոգիաներ


Ֆինանսական ռեսուրսներ
Պետական բյուջեից ստացվող
Բարեգործական ներդրումներ
Դրամաշնորհային ծրագրեր




**Ուսումնական հաստատությունն ապահովում է.**

1. հանրակրթական պետական ծրագրերին, հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան ուսուցման արդյունավետ մեթոդների և ձևերի ընտրություն,
2. յուրաքանչյուր սովորողի կրթության մատչելիություն, հավասար մասնակցության հնարավորություն,
3. մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում,
4. յուրաքանչյուր սովորողի ֆիզիկական մատչելիությունն ապահովող հարմարեցված միջավայր:

Դպրոցն իրականացնում է սննդի կազմակերպում 1-4-րդ դասարանների սովորողների համար, նպատակային ուսուցողական ծրագրեր, որոնք նպատակաուղղված են սովորողների անվտանգ կենսագործունեության, առողջ ապրելակերպի կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Իրականացնում է սովորողների հոգևոր, ֆիզիկական, սոցիալական առողջությանն ուղղված ուսումնադաստիարակչական ծրագրեր և միջոցառումներ: Սովորողների կրթական կարիքների լիարժեք ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներից դպրոցն ունի քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաներ, արհեստանոց, բուժկետ, սակայն խոչընդոտ է հանդիսանում կենսաբանության և աշխարհագրության լաբորատորիաների, առարկայական կաբինետների, կիսվող դասաժամերի համար լրացուցիչ դասասենյակների բացակայությունը:

Դպրոցի գործունեությանը չեն համապատասխանում նաև հաստատության մարդկային ռեսուրսները: Կանաչ տարածքների խնամքի, մշակման և պահպանման համար հաստատությունն ունի այգեպանի կարիք:

## 1.1. Ուսումնական հաստատության գործունեությունը՝ ըստ կրթական կարիքների բավարարման ուղղությունների

Յուրաքանչյուր կազմակերպություն ստեղծվում է հասարակության ինչ-որ կարիք կամ պահանջմունք բավարարելու համար: Տվյալ դեպքում դպրոցները պետք է բավարարեն հասարակության որոշակի կրթական կարիքները: Այստեղից ելնելով՝ ուսումնական հաստատության գործունեության համար կարևոր նախապայման է դառնում կրթական կարիքների բավարարաման արդյունավետ և նպատակային ուղղություններ գտնել և դրանք՝ որպես վերջնարդյունք, արդյունավետ սպառել՝ համադրելով ուսումնադաստիարակչական, կառավարման և վարչատնտեսական գործունեության ոլորտների փոխհամագործակցված և իրար լրացնող նպատակային աշխատանքներն այնպես, որ ուսումնառության որակը էլ ավելի լավանա:

Մեծ հաշվով կրթական կարիքները գործում են ոչ միայն որպես անձի զարգացման միջոց, այլև որպես այլ կարիքներ բավարարելու միջոց: Կրթական կարիքների նկատմամբ մանկավարժական մոտեցման էությունը հետևյալն է.

- կրթական գործընթացի բոլոր առարկաների կրթական կարիքների ձևավորման և բավարարման համար մանկավարժական պայմանների մշակման անհրաժեշտությունը,
- բացահայտված կարիքներից ելնելով՝ դպրոցի ներքին և արտաքին գործունեության քաղաքականության և ռազմավարության որոշման անհրաժեշտությունը,
- կրթական գործընթացի հիմնական (ուսուցման և դասավանդման) առարկաների հետ կապված կրթական կարիքների ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Կրթական կարիքների բավարման համար ուսումնական հաստատությունն իր գործունեությամբ պետք է կատարի հետևյալ *ուսումնադաստիրակչական աշխատանքները*՝

- ✓ ձևավորել աշակերտի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ,
- ✓ սովորողների կրթական կարիքների գնահատում՝ ըստ նրանց կարիքների բավարարման, տարբերակված ուսուցման կազմակերպում,
- ✓ կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որ գործնականում աշակերտը կարողանա կիրառել ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները,
- ✓ աշակերտներին տալ հիմնարար գիտելիքներ,
- ✓ երաշխավորել աշակերտների ազատությունը՝ որպես կրթության արդյունավետության բարձրացման միջոցի. աշակերտին պետք է ընձեռնել ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալելու հնարավորություն,

- ✓ ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն,
- ✓ ուսումնահետազոտական գործունեության համար պայմաններ ստեղծել,
- ✓ նպաստել աշակերտների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է մարդկանց հետ շփման տարբեր մեթոդների, լեզուների իմացություն, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու, խմբային աշխատանքի կարողություններ,
- ✓ կազմակերպել խորացված ուսուցում աշակերտի կարողություններին և նախասիրություններին համապատասխան,
- ✓ հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները,
- ✓ համընդհանուր ներառական կրթության կազմակերպում՝ չափորոշիչներին համապատասխան
- ✓ սովորողների այնպիսի արժեհամակարգի ձևավորում, որը նրանց հնարավորություն կտա գնահատել մեր ավանդույթներով հարուստ բազմամյա պատմությունը՝ առաջացնելով հարգանք անցյալի ձեռքբերումների և հետաքրքրություն նորի նկատմամբ,
- ✓ կրթության որակը շարունակաբար բարելավելու համար ուսուցման նորարական մոտեցումների, նոր առավել արդյունավետ ուղղությունների ներդրում,
- ✓ համաշխարհային մշակույթին ծանոթ, ավելի բանիմաց և հայրենասեր քաղաքացի ձևավորելու համար արտասահմանյան իր հասակակիցների հետ անմիջական շփումներ կազմակերպել որոշակի միջոցառումների շրջանակներում,
- ✓ ձևավորել 21-րդ դարի կարողունակ քաղաքացի, որը պետք է լինի հայրենասեր, նպատակասլաց, մրցունակ, հասարակությանը ինտեգրված, մասնագիտորեն կողմնորոշված, զինված գիտելիքներով և զարգացած կարողություններով,
- ✓ կրթության բարձր որակի ապահովում ներկայիս պահանջներին համապատասխան:

Կրթական կարիքների բավարարման համար ժամանակակից ուսումնական հաստատությունից պահանջվում է կատարել մի շարք *կառավարչական աշխատանքներ.*

- ✓ ուսուցիչների վերապատրաստման, արժանիքահենք և մասնագիտական առաջխաղացման և խրախուսման հնարավորությունների ընդլայնում,
- ✓ ժամանակակից դասավանդման մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող բարձր մասնագիտական պատրաստվածություն և որակավորում ունեցող մանկավարժական կազմի համալրում և ապահովում,
- ✓ ուսուցիչների վերապատրաստումների արդյունավետության մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների մշակում ու ներդրում,
- ✓ էլեկտրոնային ուսումնական նյութերի, ուսումնական գրականության և պաշարների որակական բարելավում,
- ✓ խրախուսման միջոցառումների կազմակերպում մոտիվացված անձնակազմ ունենալու համար,
- ✓ համագործակցային միջավայրի ստեղծում դպրոցի և խորհրդկցական ու կառավարման մարմինների, համայնքի և այլ շահառուների հետ,

- ✓ դպրոցի հիմնախնդիրների վերհանում, դրանց չեզոքացման նպատակների կազմում և իրականացում,
- ✓ համընդհանուր դրական միջավայրի, ավանդույթների և արժեքային համակարգի ձևավորում,
- ✓ ներքին կարգապահական կանոնների, ներդպրոցական վերահսկողության միջոցների ներդրում,
- ✓ դպրոց-աշակերտ, դպրոց-ընտանիք, դպրոց-համայնք կապերի ամրապնդում:

Կրթության կարիքների բավարարման համար իրականացվող *վարչատնտեսական աշխատնքներ.*

- ✓ դպրոցի շենքային պայմանների բարելավում,
- ✓ ուսումը խթանող, ապահով և անվտանգ, գրավիչ, բազմաֆունկցիոնալ ֆիզիկական և ժամանակակից թվային տեխնոլոգիաներով հագեցած համագործակցային միջավայրի ստեղծում՝ հաշվի առնելով անվտանգության և համընդհանուր մատչելիության չափանիշները, կրթության նորացող մեթոդաբանությունը,
- ✓ ժամանակակից հետազոտական ենթակառուցվածքների, գրադարանների, լաբորատորիաների և մարզադահլիճների, նորարարական ոճով կահավորված թիմային և անհատական աշխատանքների տարածքների ստեղծում,
- ✓ դպրոցի ժամանակակից համակարգչային սարքավորումների, ուսումնական գույքի շարունակական արդիականացում, համացանցի որակյալ հասանելիության ապահովում,
- ✓ արտադասարանական խմբակների և դասընթացների ծավալների ընդլայնում,
- ✓ աշակերտների սննդի կազմակերպմում,
- ✓ զարգացման ծրագրի իրականացման վերահսկողություն:

Վերոնշյալ գործողությունների իրականացումը կնպաստի սովորողների զարգացմանը, կբավարարի նրանց կրթական կարիքները՝ սահմանելով կրթության որակի բարձրացման և ազգային դպրոցի գլխավոր նպատակի իրագործման ուղիները, կձևավորի հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ:

## 1.2. Դպրոցի գործունեությունը համապատասխանում է պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

Ուսումնական հաստատությունը ձգտում է պատրաստել և առաջ մղել սովորողներին արագ փոփոխվող աշխարհում՝ նրանց մեջ սերմանելով հարգանք ազնվության, հաստատակամության, հավատարմության, կարեկցանքի և հիմնական այլ արժեքների նկատմամբ, քննադատական մտածողության հմտություններ, գլոբալ հեռանկարներ: Սովորողները հաջողություն կունենան այսօր և պատրաստ կլինեն վաղվան:

Ծովագյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոցի *տեսլականն* է ամուր և դրական կապեր հաստատել սովորողների հետ, նպաստել, որ նրանք ձեռք բերեն անկախություն, վստահություն առաջանա դպրոցի հանդեպ և դպրոց-շրջանավարտ համագործակցությունը դառնա մշտական ու ամուր: Ուսումնական հաստատության գլխավոր *նպատակն* է սովորողների մոտ զարգացնել ճկուն և վերլուծական մտածելակերպը, դրանով նրանց գլոբալիստական և ժամանակակից աշխարհում դարձնել դժվարությունների առջև դիմակայուն և ավելի մրցունակ կադրեր: Դպրոցը ձգտում է իր շրջանավարտներին ապահովել ակադեմիական հիմքով, որով նրանք հնարավորություն կունենան ընդունվել իրենց նախընտրած հաստատությունները և իրենց գիտելիքների բազայով կհասնեն հաջողության:

Դպրոցը հանձնառու է ընդունել շփումների կարևորությունը և խրախուսել երկխոսությունը ուսումնական հաստատության բոլոր շահառուների միջև, այդպես կխթանվի ինտելեկտուալ և սոցիալական աճն ու զարգացումը դպրոցում, կապահովվի անվտանգ, աջակցող միջավայր, որպեսզի աշակերտները հնարավորություն ունենան ուսումնասիրելու և պարզաբանելու իրենց համոզմունքներն ու ձևավորելու իրենց արժեհամակարգը, ինքնուրույն մտածելու և ռիսկի դիմելու, խոսելու հմտություններ ձևավորելու, ճանաչելու և արձագանքելու անհատական և ինստիտուցիոնալ նախապաշարմունքներին՝ հիմնված կրոնի, սեռի, ռասայի, սոցիալ-տնտեսական կարգավիճակի, էթնիկական պատկանելության, տարիքի և մտավոր ու ֆիզիկական կարողությունների վրա:

*Դպրոցի առաքելությունն* է հայրենասեր, բանիմաց, վեհ արժեքներով օժտված, ազգանվեր մարդ կերտել: Պետության կայուն հենքը՝ ազգային դպրոցն է, որի մեծագույն նպատակը արժեքների պահպանումն ու ազգային մշակույթի ամրապնդումն է: Դպրոցի առաքելությունը պետք է լինի 21-րդ դարի կրթական պահանջներին համապատասխան, ուսումնատենչ, առաքինի քաղաքացի և մարդ դաստիարակելը:

*Մեր առաքելությունն* է կերտել այնպիսի միջավայր, որտեղ բոլորին հարգում և գնահատում են: Ուսումնական հաստատության անձնակազմի բոլոր անդամները համագործակցելով ծնողների և ընտանիքների հետ, լիովին հավատարիմ են սովորողների դպրոցի և կարիերայի պատրաստությանը: Սովորողները կլինեն պատրաստ հանդիպելու ընթացիկ և ապագա մարտահրավերներին՝ զարգացնելու քաղաքացիական պատասխանատվությունը, սոցիալական իրազեկությունը և անձնական աճը: Նշենք, որ դպրոցի սահմանած տեսլականը, նպատակը և առաքելությունը բխում են պետության վարած կրթական քաղաքականությունից:

Այսպիսով՝ ուսումնական հաստատության գործունեությունը համապատասխանում է *Հայաստանի Հանրապետության կրթական քաղաքականությանը*, ոլորտը կարգավորող օրենսդրությանը, դպրոցի կանոնադրությանը: Ուսումնական հաստատության գործունեության համար հիմք են հանդիսանում նորմատիվային իրավական ակտերը, համապատասխան օրենքները և մի շարք այլ փաստաթղթեր: Առանձնացնենք մի քանի կարևորները, որոնցից են «Կրթության զարգացման պետական ծրագիր», «Կրթության մասին օրենք», «ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր», «Երեխայի իրավունքների մասին» օրենք, «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», «Նորմատիվ իրավական ակտերի

մասին» օրենք, Դպրոցի կանոնադրություն, «Հանրակրթության պետական չափորոշիչ», ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված առանձին ոլորտների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը:

Ուսումնական հաստատությունը պետք է կարողանա իր գործունեությամբ նպաստել նրան, որ բոլոր շահառու խմբերի կարիքները բավարարվեն, և նրանք ներգրավվեն ուսումնական հաստատության զարգացման գործընթացում՝ ակտիվ աջակցելով դրան: Յուրաքանչյուր ուսումնական հաստատություն ձգտում է համայնքի հետ ակտիվ համագործակցելու միջոցով ստեղծել համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ, ինչպես նաև դպրոց-ծնողական համայնքի սերտ համագործակցության միջոցով ստեղծել մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ:

Ուսումնական հաստատությունը իր գործունեությունը ծավալելու ընթացքում ակտիվ և սերտ համագործակցում է համայնքի, ծնողների, մանկավարժների և աշակերտների հետ և ամեն մի կարևոր որոշում կայացնելիս հաշվի է առնվում յուրաքանչյուր շահառուի կարծիքը:

*Ծնողական համայնքը* ծնողխորհուրդների, ծնողական ժողովների միջոցով պարբերաբար տեղեկանում է ուսումնական հաստատության առկա խնդիրների և դպրոցում տիրող սոցիալ-հոգեբանական միջավայրին: Սակայն այստեղ կան որոշակի բացեր, որոնք հնարավոր կլինի լրացնել մի շարք օգտակար և ուսուցողական միջոցառումների, ուսուցիչ-ծնող և դպրոց-ծնող անմիջական փոխհարաբերությունների, սեմինարների միջոցով:

*Համայնք-դպրոց փոխհարաբերություններում* ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ հզոր է այն համայնքը, որն ունի որակյալ, լավ կրթություն ապահովող դպրոց, քանի որ դպրոցը կրթելով հայրենասեր, բանիմաց, վերլուծող և ժամանակի մարտահարավերները լավ պատկերացնող քաղաքացիներ, նպաստում է, որ պետության համար պիտանի քաղաքացին մնա և զարգացնի իր համայնքը՝ ունեցած գիտելիքները փորձելով վերածել բարիքների իր իսկ ծննդավայրի համար: Կարևոր է, որ պարբերաբար կազմակերպվեն բաց դասեր, միջոցառումներ և հանդիպումներ ուսուցիչների, աշակերտների և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, այդպես նրանք վեր կհանեն համայնքի այն խնդիրները, որոնք պահանջում են հրատապ լուծումներ, իսկ ուսումնական հաստատությունը կներառվի այդ խնդիրները լուծելու համար արդյունավետ ուղղություններ փնտրելու գործին՝ օգտագործելով իր մտավոր ռեսուրսները:

Ուսումնական հաստատությունը պետք է շահագրգռված լինի համագործակցել և հնարավորինս շատ մասնակցել պետության կողմից կազմակերպվող բոլոր ճանաչողական միջոցառումներին, մրցույթներին, վերապատրաստումներին, որոնք կնպաստեն աշակերտական և մանկավարժական կազմի զարգացմանը: Հետևելով պետության կրթական քաղաքականության միտումներին՝ ուսումնական հաստատությունը պետք է ակտիվություն դրսևորի լիազոր մարմնի կարգադրությունների, հրահանգների կատարաման գործում:

Վերոնշյալին ավելի մանրամասն փորձել եմ անդրադառնալ դպրոցի զարգացման ծրագրում: Դպրոցի զարգացման ծրագիրը պետք է խթան լինի թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների և թե՛ դպրոցի բոլոր այլ շահառու սուբյեկտների համար, որի վերջնարդյունքը պետք է լինի որակապես կրթված քաղաքացի:

## 1.3. Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը

Հաստատության ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ ու թափանցիկ իրականացվում է սահմանված կարգով:

Ֆինանսատնտեսական եռամյա հաշվետվությունները քննարկվում են դպրոցի կառավարման խորհրդում, տեղադրվում են դպրոցի և լիազոր մարմնի կայքէջերում: Ամեն տարի բյուջեի նախագիծը քննարկվում է դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների նիստերում, կազմակերպվում են հանրային լսումներ: Ներկայացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա խորհրդի կողմից քննարկվում և հավանության է արժանանում բյուջեի նախագիծը և ներկայացվում լիազոր մարմնի հաստատման:

Բյուջեի ծախսերի ուղղություններն են.

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ
- գրասենյակային, տնտեսական ապրանքներ
- գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- տեղեկատվական ծառայություն
- ներքին գործուղումներ
- կենցաղային և հանրային սնունդ
- կոմունալ վճարներ
- հատուկ նպատակային ծախսեր:

2022թ․ նոյեմբերից տնտեսված միջոցների հաշվին մանկավարժական աշխատողների դրույքաչափի փոփոխություն է կատարվել՝ (0-15 տարի ստաժ) 113000-ից դարձել է 115666, (15 տարի և ավել) 120165-ից՝ 123000 ՀՀ դրամ, ուսումնաօժանդակ աշխատակազմի աշխատավարձը 92275 դրամի փոխարեն դարձել է 104000 դրամ:

Շնորհիվ սովորողների թվի աճի՝ (2018 թվական՝ 512 աշակերտ, 2023 թվականին՝ 529 աշակերտ) անցած 5 տարիների ընթացքում բարելավվել է դպրոցի ֆինանսական վիճակը՝ 90924100 հասնելով 114288400 ՀՀ դրամի:

Դպրոցը խնայողությունների միջոցով իրականացրել է թե՛ գույքի ձեռքբերում, և՛ թե վերանորոգման աշխատանքներ:

2019թ. ձեռք է բերվել աշխատասենյակի կահույք:

2020-2021թթ. սալիկապատվել է տարրական դպրոցի մասնաշենքի առաջին հարկի միջանցքը, վերանորոգվել են երկու հարկերի սանհանգույցները:

2021 թվականի դեկտեմբեր ամսին ուսուցիչներին հատկացվել է հավելավճար՝ աշխատավարձի 30 տոկոսի չափով:

2021թ ձեռք է բերվել նոր սերնդի 2 համակարգիչ:

2022թ ձեռք է բերվել խոտհնձիչ:

2022թ վերանորոգվել է տարրական մասնաշենքի տանիքը, 2023-ին՝ ուժգին քամուց վնասված տանիքի հատվածները:

2023թ հունվարին դպրոցը ձեռք է բերել ինտերակտիվ երկու գրատախտակ՝ 1800000 ՀՀ դրամ արժողությամբ:

Դպրոցի ձեռքբերված ու առկա գույքը հաշվառված է և յուրաքանչյուր տարի կատարվում է գույքագրում:

Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները նախորդ 3 ուսումնական տարիների համար

| Ցուցանիշներ | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան /աճ կամ նվազում/ |
|---|---|---|---|---|
| Դասարանների միջին խտությունը /հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը կոմպլեկտավորված դասարանների ընդհանուր թվին/ | 24,6 | 23,2 | 22 | նվազում |
| Սովորող/ուսուցիչ հարաբերությունը /հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին/ | 11,2 | 11,1 | 10,5 | նվազում |
| Սովորող/սպասարկող անձնակազմ հարաբերությունը /հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը սպասարկող անձնակազմի ընդհանուր թվին/ | 24,6 | 25,4 | 25,2 | աճ |
| Մեկ սովորողի հաշվով հաստատության նախահաշիվը /հաշվարկ. հաստատության տարեկան բյուջեով հաստատված ամբողջ գումարի հարաբերությունը հաստատության սովորողների | 204,9 | 209,1 | 218,4 | աճ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ընդհանուր թվին/ | | | | |
| Վարչական աշխատողների միջին աշխատավարձը | 171,4 | 177,9 | 184,7 | աճ |

<u>Տվյալներ հաստատության բյուջետային միջոցների վերաբերյալ</u>

| | 2020 | 2021թ | 2022թ |
|---|---|---|---|
| Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը<br>/հաշվարկ․ ծնողների կողմից տարվա կտրվածքով կատարած ներդրումների, դրամաշնորհների և հաստատության տարեկան բյուջեում/ | - | - | - |
| Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը | - | - | - |
| Հաստատության տարեկան հաշվում արտա-բյուջետային միջոցների չափը<br>/հաշվարկ․ հաստատության տարեկան բյուջեում արտաբյուջետային միջոցների չափի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/ | - | - | - |
| Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը /հաշվարկ․ աշխատավարձերի վճարման հոդվածով՝ ներառյալ հարկերը, հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/ | 90,1 | 85,9 | 92,1 |
| Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը<br>/հաշվարկ․ կոմունալ վճարների հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/ | 7,5 | 8,9 | 8,6 |
| Նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռք բերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը<br>/հաշվարկ․ գույքի ձեռք բերման հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և | - | 0,8 | 1,8 |

| | | | |
|---|---|---|---|
| հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ/ | | | |

## 1.4. Հաստատության գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Հաստատության բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումն իրականացվում է սահմանված կարգով:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով.

- Դպրոցի կանոնադրությամբ
- Հանրակրթության մասին ՀՀ օրենքով
- Կրթության մասին ՀՀ օրենքով
- ՀՀ աշխատանքային օերնսգրքով
- Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով
- Ներքին իրավական ակտերով
- Նորմատիվ փաստաթղթերով
- Իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով:

Յուրաքանչյուր ուստարվա համար կազմվում է ներդպրոցական վերահսկողության պլան, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան, որոնք կազմվում են հիմք ընդունելով դպրոցի նեքին գնահատման հաշվետվությունները և զարգացման ծրագիրը:

Մշակվում և գործածության մեջ են դրվում նաև իրավական այլ ակտեր /օրինակ՝ աշխատակարգեր, ներքին կարգապահական կանոններ և այլն/:

Ուսումնական հաստատության գործունեության փաստաթղթերի զգալի մասը աստիճանաբար անցում է կատարել էլեկտրոնային ձևաչափի: Հաստատությունում վարվում են նաև կառավարման, մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների արձանագրությունների մատյանները, միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյանը, հիմնական կրթության վկայականների բաշխման մատյանը, ուսուցիչների բաց թողած և փոխարինած դասաժամերի հաշվառման մատյանը, ուսումնական առարկաների թեմատիկ պլանները, դասացուցակը ներմուծվում է emis համակարգ:

## 2. ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ժամանակակից շենքային պայմանների առկայությունը կարևոր նախապայման է որակյալ կրթություն ապահովելու համար: Փորձենք հասկանալ, թե Ծովագյուղի միջնակարգ դպրոցի շենքային պայմանները որքանով են համապատասխանում ուսումնական գործընթացի հարամարավետ միջավայր ստեղծելուն:

Դպրոցն ունի 155 երկար ու ձիգ տարիների պատմություն: 1830 թվականի գարնանը Արծափից գաղթած 70 ընտանիք հանգրվանել է Սևանա լճի ափին: Գյուղի դպրոցի պատմությունը սկիզբ է առել 1868-1869 ուսումնական տարում հիմնված եկեղեցական – ծխական դպրանոցից, մաքառելով հասել է մինչև 20-րդ դարասկիզբ և Հարություն Տեր Մինասյանի ջանքերով դարձել եռամյա երկսեռ դպրոց:

1912-1913 ուսումնական տարում դպրոցում սովորել է 150 աշակերտ:

1930-1931 թթ դպրոցն ունեցել է առաջին պետական շենքը՝ ապահովելով սկզբում՝ վեցամյա, հետո՝ յոթամյա կրթություն: 1949 թվականից դպրոցը դարձել է միջնակարգ, 1954 թվականից անվանակոչվել է հայ մեծանուն գրող Մուրացանի անունով և շարունակում է կերտել իր պատմությունը՝ հարազատ գրկում կրթելով արդեն ավելի քան 550 աշակերտ:

Դպրոցի նոր շենքը շահագործման է հանձնվել 1972 թվականին, վերանորոգվել՝ 2012-2013 թվականներին: Դպրոցը նախատեսված է 930 աշակերտի համար: Շենքի ընդհանուր տարածքը՝ ≈5000 քմ: Դպրոցն ունի երեք մասնաշենք, բոլոր մասնաշենքերը իրար հետ կապված են երկար միջանցքով:

Առաջին մասնաշենքը երկհարկանի է: Մասնաշենքի առաջին հարկում 2 դասասենյակ 2023 թվականի սեպտեմբերից տրամադրվել է նախակրթարանին: Առաջին և երկրորդ հարկի մնացած դասասենյակներում սովորում են 1-4-րդ դասարանների աշակերտները: Դասասենյակներից ութը ունեն յուրաքանչյուրը 48քմ տարածք, երեքը՝ 32քմ:

Երկրորդ եռահարկ մասնաշենքում են գտնվում ուսուցչանոցը, ընդունարանը, տնօրենի սենյակը, գրադարանը, համակարգչային դասասենյակները, «Արմաթ» ինժեներական լաբորատորիան, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիաները, ռազմագիտության պահեստը, արհեստանոցները, 5-12-րդ դասարանների դասասենյակները, որոնցից երկուսը ունեն յուրաքանչյուրը 69,6քմ տարածք, տասներկու դասասենյակ՝ 52,5քմ տարածք և երկուսը՝ 35քմ:

ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատելու համար կա առանձին սենյակ բազմամասնագիտական խմբի աշխատանքների իրականացման համար:

Երրորդ մասնաշենքում են գտնվում ճաշարանը, խոհանոցը, մառանը, հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճը, տղաների և աղջիկների հանդերձարանները:

Բոլոր մասնաշենքերում կան տղաների, աղջիկների և աշխատողների համար նախատեսված վերանորոգված սանհանգույցներ:

Վերանորոգման կարիք ունի գրադարանը և մասնակի վերանորոգման կարիք ունեն մի քանի դասասենյակներ (քանդված և փչացած մանրահատակ, խոնավությունից վնասված

պատեր և այլն): Դպրոցի բոլոր մասնաշենքերի միջանցքները սալիկապատված են, բացառությամբ առաջին մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքի, որտեղ մանրահատակը գտնվում է ոչ բարվոք վիճակում և ենթակա է սալիկապատման:

Դպրոցն իր մարդկային ներուժը օգտագործելով՝ պարբերար իրականացնում է շենքային պայմանների պահպանման և դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներ:

Շենքի լուսավորությունը համապատասխանում է ստանդարտներին: Դպրոցը ցանկապատված է (Դպրոցի տարածքը, այսպիսով փակ է և անվտանգ է աշակերտների ազատ տեղաշարժի համար): Ունի կանաչապատ տարածք, ընդարձակ ասֆալտապատված բակ, մարզադաշտ, ֆուտբոլի խաղադաշտ: Դպրոցին կից գտնվում է կաթսայատունը:

Դպրոցն ապահովված է ինտերնետ կապով: Շենքի մուտքը հարմարեցված է ԿԱՊԿՈւ սովորողների անվտանգ տեղաշարժն ապահովող պայմաններով՝ մուտքի աստիճաններին թեքահարթակ, երկփեղկ դռներ, սակայն գլխավոր միջանցքից մասնաշենքեր տանող աստիճանների վրա թեքահարթակներ չկան:

Դպրոցն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, շուրջօրյա հոսող խմելու ջրով, սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով:

Դպրոցի շենքային ոչ բավարար պայմանների պատճառով առաջանում են որակյալ կրթության կազմակերպման համար որոշակի դժվարություններ.

1. քանի որ դպրոցում կոմպլեկտավորվում են հիմնականում երեսունից ավել աշակերտ ունեցող դասարաններ, դասասենյակներից մեծ մասում չեն ապահովվում առողջապահության նախարարի 2017 թվականի մարտի 28-ի N 12-Ն հրամանով սահմանված նորմերը՝ մեկ սովորողի համար սահմանված՝ 2 մ$^2$ մակերեսի պահանջը
2. դասասենյակների քանակը չի բավարարում կիսվող դասաժամերի կազմակերպմանը
3. դպրոցը չունի հրաձգարան, ռազմագիտության դասասենյակ
4. հաստատությունը չունի աշխարհագրության և կենսաբանության կաբինետներ
5. դպրոցը չունի ապաստարան:

***Դպրոցի շենքային պայմանների առկա վիճակը բնութագրելու արդյունքում առանձնացրել եմ շենքային պայմանների ուժեղ և թույլ կողմերը.***

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցն ունի լավ շենքային պայմաններ, տարածքն առանձնացված է ցանկապատով,<br>• կաթսայատան առանձին շինություն և լոկալ ջեռուցում,<br>• անհրաժեշտ գույքով կահավորված հանդիսությունների դահլիճի և վերանորոգված մարզադահլիճի | • Դպրոցը չունի ապաստարան,<br>• տարրական դպրոցի երկրորդ հարկի հատակը սալիկապատված չէ և գտնվում է ոչ բարվոք վիճակում,<br>• թեքահարթակների պակասը,<br>• դասասենյակների պակասը,<br>• դպրոցն ունի բարեգործությունների նվիրատվությունների, և լրացուցիչ |

| | |
|---|---|
| առկայություն,<br>• նոր կառուցված բացօդյա ֆուտբոլի խաղադաշտ<br>• պարբերաբար կազմակերպվող միջոցառումներ շենքի պահպանման և մաքրման համար: | ֆինանսական միջոցների կարիք: |

***<u>Նյութատեխնիկական բազա</u>***

Հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը նպաստում է նաև նյութատեխնիկական բազան:

Դժվար է պատկերացնել որակյալ կրթության կազմակերպումն ու ապահովումը առանց բավարար նյութատեխնիկական բազայի առկայության: Արդի ուսումնական հաստատությունը պետք հագեցած լինի այն բոլոր անհրաժեշտ նյութատեխնիկական բազայով, որը հնարավորություն կտա սովորողներին ուսուցանվող առարկաներն ավելի մատչելի և ընկալելի դարձնել: Օրինակ դժվար է պատկերացնել ինֆորմատիկայի դասաժամը առանց համակարգիչների, կամ քիմիայի դասաժամը՝ առանց լաբորատորիայի առկայության:

Դպրոցի բոլոր հատվածներում վերահսկողության մակարդակի բարելավման համար մեծ նշանակություն ունի տեսախցիկների դերը: Առաջիկայում հնարավորության դեպքում նախատեսվում է ձեռք բերել և տեղադրել տեսախցիկներ շենքի և՛ ներսում, և՛ դրսում:

«Օհմ էներջի» կազմակերպության միջնորդությամբ դպրոցում տեղադրվել են արևային վահանակներ, ընթանում են միացման աշխատանքներ, ինչը կթեթևացնի դպրոցի կոմունալ ծախսերը:

Դպրոցի բոլոր դասասենյակներում առկա են անհրաժեշտ քանակի սեղան-նստարաններ, ուսուցչի սեղաններ և աթոռներ, գրատախտակներ, պահարաններ: Ուսուցչանոցը, ընդունարանը և տնօրենի սենյակը ապահովված են անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Մարզադահլիճը համալրված է նոր մարզագույքով: Համակարգչային կաբինետում առկա են 8 համակարգիչներ, 11 նոթբուքներ պրոյեկտոր, ինտերակտիվ գրատախտակ: Դպրոցում տեսադասերի ու բաց դասերի համար գործում է նաև երկրորդ էլեկտրոնային դասասենյակը, որտեղ առկա է պրոյեկտոր, ինտերակտիվ գրատախտակ և 1 նոթբուք: Համակարգչային դասասենյակները կարիք ունեն նոր սերնդի համակարգիչների կամ նոթբուքերի:

Գրադարանը կարիք ունի նոր գույքի՝ համակարգչի, հարմարավետ աթոռների և սեղանների, պահարանների, գեղարվեստական դասական գրականության:

Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության դասաժամերի արդյունավետ և հետաքրքիր կազմակերպման համար անհրաժեշտ են լաբորատոր նյութեր և սարքավորումներ:

Տեխնոլոգիայի դասաժամերի համար անհրաժեշտ են նոր սարքավորումներ՝ կարի մեքենաներ, հաստոցներ ։

| Տարածք | Չափ | Կարիքը | Նյութատեխնիկական բազան | Դիդակտիկ նյութեր | Կարիքը |
|---|---|---|---|---|---|
| Լաբորատորիաներ, Կաբինետներ և դահլիճներ | Տարածքը /քմ/ | Վերանորոգման կարիք | Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները պարագաները | ՈՒսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը | Լրացուցիչ գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը |
| Դասասենյակներ 27 | 2դ-69,6<br>12դ-52,5<br>2դ-35<br>8դ-48<br>3դ-32 | Վերանորոգման կարիք ունեն 4 դասասենյակներ | 292 սեղան, նստարան, 27 պահարան, 27 փափուկ աթոռ | | Շերտավարագույրների կարիք 20 դասասենյակում |
| Լաբորատորիա 2 | | Վերանորոգված | Առկա են ֆիզիկայի և քիմիայի որոշակի անհրաժեշտ լաբորատոր սարքավորումներ, արդի պահանջներին անհամապատասխան քիմիայի և կենսաբանության նյութեր և սարքավորումներ | - | Քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության սարքավորումներ, պարագաներ, նյութեր։ |
| Ռազմագիտության պահեստ | 16 | Վերանորոգված | Պատգարակ-1<br>Հակագազ-110<br>АК-74 ավտոմատ-1<br>Ռաձիոակտիվ ճառագայթման դոզայի չափիչ՝ ДП-5В - 1 | Պաստառ -15 | Էլեկտրոնային հրաձգարան |
| Համակարգչային դասասենյակ 2 | յուր. - 52,5; | վերանորոգված | Համակարգիչ - 8,<br>նոթբուք - 12,<br>ինտերակտիվ գրատախտակ-2,<br>Պրոեկտոր-2<br>Ձայնարկիչ-2<br>Պահարան-2<br>Աշակերտական սեղան, | | Նոր սերնդի համակարգիչներ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | նստարան-24<br>ուսուցչի սեղան-2<br>Փափուկ աթոռ-2 | | |
| <<Արմաթ>>ինժեներական լաբորատորիա | 20 | Վերանորոգված | «Այգեստան Գ»-2,<br>Համակարգիչ (մոնիտոր, ստեղնաշար, մկնիկ, երկարացման լար)-2<br>Եռաչափ տպիչ-1<br>CNC շաղափային և լազերային հաստոց-1<br>VEX ռոբոտ-1<br>Ռոբոտ փոքր-1<br>Սերոբ-1<br>Նաիրի սալիկ -3<br>Շարժիչ-8<br>Սենսոր-16<br>փոշեկուլ-1<br>Համակարգչային սեղան-6<br>աթոռ-15 | | |
| Գրադարան | 52,5 | վերանորոգման կարիք | Գեղարվեստական գրքեր-2017<br>Տեղեկատվական գրքեր-20<br>Հանրագիտարաններ-20<br>Ուսումնամեթոդական-329<br>Ատլասներ-66<br>Դասագրքեր-<br>Գրասեղան-1<br>Աթոռ-5<br>Ընթերցանության սեղան-7<br>Պահարան /փայտե/-8<br>Պահարան /երկաթե/-9 | Պաստառներ Գրողների նկարներ -2տ | Պահարաններ, համակարգիչ, նոր գրականություն, գրադարանային ֆոնդի թվայնացում |
| ՈՒսուցչանոց | 52,5 | վերանորոգված | Գրասեղաններ-4<br>Խորհրդակցությունների սեղան -2<br>Աթոռ-20<br>Համակարգիչ-1<br>Պահարան-4<br>Հանդերձապահարան-1 | | Տպիչ սարք |
| Սանհանգույց/ | Յուր. 9 | վերանորո | Լվացարան-30 | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տղաների և աղջիկների/ 15 | | գված | Հայելի -10 | | |
| Տնօրենի սենյակ | 35 | վերանորո գված | Համակարգիչ-1<br>Տպիչ սարք-1<br>Գրասեղան-1<br>Աթոռ-10<br>Բազկաթոռ-1<br>Խորհրդակցությունների սեղան-1<br>Պահարան-2<br>հանդերձապահարան-1<br>Չհրկիզվող պահարան-1 | | |
| Ընդունարան | 35 | վերանորո գված | Համակարգիչ-4<br>Տպիչ սարք-2<br>Սկաներ-1<br>Պահարան-3<br>Չհրկիզվող պահարան-1<br>Գրասեղան-4<br>Աթոռ-4 | | Գունավոր տպիչ սարք |
| Աշխատակիցների սանհանգույց 2 | յուր 3,5 | վերանորո գված | Լվացարան-2<br>Հայելի -2 | | |
| Սպորտ դահլիճ | 300 | Վերանորո գված | Գնդակ-15<br>Թենիսի դաշտ-2<br>Բարձրացատկի հավաքածու-1<br>Մարմնամարզական օղակներ-5<br>Ցատկապարան-20<br>Նռնակ-5<br>Սկավառակ-2<br>Փոքր նետման գնդակ-10<br>Մատրաս-6<br>Մագլցման պարան-1<br>Մարզապատ-8<br>Բասկետբոլի ցանց-2<br>Փայտե նստարան-4<br>Կրակմարիչ-1<br>Ջուգափայտ-1<br>Պտտաձող-1 | - | Վոլեյբոլի ցանց,<br>Մարմնամարզ ական գերան,<br>Մարմնամարզ ական գերան,<br>Գիր 5-10կգ<br>Գնդակներ, տրինաժոր |
| Խոհանոց | 27,5 | Վերանորո գված | Չժանգոտող մետաղից դարակաշար-2<br>Չժանգոտող մետաղից սեղան -2<br>Սառնարան-1 | | Չժանգոտող մետաղից դարակաշար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | Գազօջախ-1<br>Էլեկտրական վառարան 4 այրիչով, ջեռոցով-1<br>Էլեկտրական վառարան 2 բաժանմունքով-1<br>Լվացարան, չորանոցով-3<br>Ջրատաքացուցիչ-1<br>Կշեռք-1<br>Ջեռոց-1<br>Բաժակներ-110<br>Ափսե-110<br>Պատառաքաղ-110<br>Գդալ-110<br>Կաթսա-4<br>Թերմոս 10լ-1<br>Օդաքարշ-1 | | |
| Ճաշարան | 72 | վերանորոգված | Սեղան-20<br>Աթոռ /երկտեղանի/ -40<br>Աթոռ/մեկ տեղանի/ - 5 | | Ճաշարանի համապատասխան սեղան, աթոռ, լվացարան |
| Արհեստանոց 2 | 69,6;<br>52,5 | Վերանորոգված | Հաստոց-7<br>Դազգահ փականագործական-15<br>Փայտամշակման դազգահ-12<br>Էլ. ֆուգան սղոց-1<br>Փայտամշակման խառատային հաստոց-3<br>Էլ. սրաքար-1<br>Միկրոմետր-1<br>Զոդակարգին-1<br>Ճկող հարմարանք – 1<br>կարի մեքենա-12<br>Կրակմարիչ-1 | | Նոր սերնդի սարքեր, սարքավորումներ, գործիքներ, կարի մեքենաներ, էլեկտրոխարանիչ |
| Հանդիսությունների դահլիճ | 216 | վերանորոգված | Դաշնամուր-1<br>Փափուկ աթոռ-200<br>Շերտավարագույր-54<br>Վարագույր-90<br>Ամբիոն-1<br>Կրակմարիչ-1 | | |
| Մառան | 25 | վերանորո | Սառնարան-1 | | Չժանգոտող |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| /Պահեստ/ | | գված | Չժանգոտող մետաղից դարակաշար -2 | | մետաղից սեղան |
| Միջանցքներ 1ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքերի | 940 | վերանորո գված | Հրշեջ վահանակ – 1<br>Կրակմարիչ - 4 | | 1ին մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքի հատակը սալիկապատել /96 քմ/ |
| Միջանցք մասնաշենքերը կապող | 347 | վերանորո գված | | | |

__*Դպրոցի նյութատեխնիկական բազայի և այլ ռեսուրսների համեմատական նկարագրում հաշվետու ժամանակաշրջանում (վերագնահատում՝ 30.03.2018թ)՝*__

| | 2018 /հազար դրամ/ | 2023 /հազար դրամ/ | Ավելացել է /հազար դրամ/ |
|---|---|---|---|
| **Հիմնական գույք** | 14430000 | 31692300 | 17262300 |
| **Շրջանառու գույք** | 4450372 | 8161702 | 3711330 |
| **Ընդամենը** | 18880372 | 39854002 | 20973630 |

*Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը.*

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Ինտերակտիվ և համակարգչային դասասենյակներ ունենալը /SMART գրատախտակների առկայություն/,<br>• <<Արմաթ>>ինժեներական լաբորատորիա<br>• լաբորատոր գույքանյութական անհրաժեշտ բազա/ քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն, աշխարհագրություն/ ունենալը,<br>• անհրաժեշտ գույքով կահավորված հանդիսությունների դահլիճի և վերանորոգված մարզադահլիճի առկայություն,<br>• ուսուցիչների մեծ մասը կիրառում է նոր տեխնոլոգիաներ:<br>• Կոմունալ հարմարությունների առկայություն:<br>• Արևի էներգիայի օգտագործման | • Դպրոցում տեսախցիկների հսկողության բացակայություն,<br>• արտաքին և ներքին հակահրդեհային ջրամատակարարում չունենալը,<br>• բնագիտական առարկաների գծով առանձին լաբորատորիաներ չունենալը,<br>• գրադարանային ֆոնդը թվայնացված չէ,<br>• համակարգչային արդիական լիարժեք սարքավորումներ չունենալը,<br>• ձեռնարկատիրական գործունեության բացակայությունը, |

| | |
|---|---|
| հնարավորություն։<br>• Դպրոցի անձնակազմի և աշակերտների թվին համապատասխան սեղանների աթոռների ու գրատախտակների առկայություն։ | |

## 3. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

***Կառավարման խորհուրդ***

Ուսումնական հաստատության կանոնադրության 4-րդ գլխի կետ 32-ի համաձայն դպրոցում ձևավորված է կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ ։

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից: Կառավարման խրոհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Խորհրդի նիստերի արձանագրությունները ներկայացվում են հրապարակման դպրոցի պաշտոնական կայքէջում: Խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն՝ քննարկում է զարգացման ծրագրի հաշվետվություններն ու արդյունքները: Խորհուրդը հաստատել է դպրոցի ներքին կարգապահական կանոնները, կազմակերպական կառուցվածքը, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը: Տնօրենի ներկայացմամբ կառավարման խորհուրդը քննարկում է տարիֆիկացիոն ցուցակները, հաստիքացուցակը, ամենամյա ծախսերի նախահաշիվը, հավանության է արժանացնում և ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը: Խորհուրդը յուրաքանչյուր հաշվետու տարվա ընթացքում քննարկում է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության, ֆինանսատնտեսական, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները: Յուրաքանչյուր ուստարվա ավարտին խորհուրդն առաջադրում է իր կազմից անդամներ ներքին գնահատման աշխատանքներին մասնակցելու համար: Խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, աջակցում է հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, առնվազն երկու անգամ լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն: Առաջարկություններ է ներկայացնում լիազորված մարմնին հաստատության գործունեության բնագավառին, խնդիրներին և նպատակներին համապատասխան: 2020թ-ին խորհուրդն առաջարկություն է ներկայացրել լիազոր մարմին տարրական դպրոցի մասնաշենքի առաջին հարկի միջանցքի սալիկապատման, երկու հարկերի սանհանգույցների վերանորոգման համար: Ամեն տարի դեկտեմբերին խորհուրդը քննարկել է բյուջեի նախագիծը, դիտողությունների և առաջարկությունների ամփոփաթերթերը: Բյուջեի նախագծի հետ կապված առաջարկություն ներկայացրած քաղաքացիները (մանկավարժներ, ծնողներ, աշակերտներ) հրավիրվել են բյուջեի պլանավորման համար կազմակերպված նիստերին՝ իրենց ներկայացրած առաջարկությունների մասով պարզաբանումներ ստանալու և քննարկումների նպատակով: Բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով խորհուրդը բյուջեի կազմման, քննարկման և կատարման գործընթացների նկատմամբ իրականացրել է վերահսկողություն: Խորհրդի պահանջով տնօրենի կողմից ներկայացվել է բյուջեի կատարման մասին կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, որոնք ներառում են՝

1. տեղեկություններ հաշվետու տարում հաստատության բյուջեի կատարված ծախսերի չափերի և ուղղությունների մասին

2. տեղեկություններ հաշվետու տարում հաստատության բյուջեի մուտքերի և ելքերի մասին:

Տնօրենը յուրաքանչյուր բյուջետային տարվա ավարտից հետո մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվա մարտի 15-ը խորհրդին է ներկայացրել բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը:

Խորհուրդը ամեն կիսամյակ մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ կազմակերպում է համատեղ քննարկումներ, զրույցներ, կլոր սեղաններ դպրոցի գործունեության, իրականացվող և իրականացված աշխատանքների, առկա խնդիրների և դրանց լուծման ուղիների շուրջ:

Սահմանված կարգով ձևավորվել և գործում է հաստատության խորհուրդը՝ ներքոհիշյալ կազմով.

| Անուն, ազգանուն, հայրանուն | Ծննդյան թիվը | Աշխատանքի վայրը, զբաղեցրած պաշտոնը | Կրթությունը (բարձրագույն, միջին մասնագիտական) | Ո՞ւմ կողմից է առաջադրվել | Աշխատանքայինս տաժը տվյալ դպրոցում | Ո՞ր թվականից է խորհրդի անդամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Ջանիկյան Դավիթ Ռոբերտի | 19.08.1992 | <<Գազպրոմ Արմենիա>>ՓԲԸ բաժնի պետ | Բարձրագույն | ՏԻՄ | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 2. Մկրտչյան Արմինե Զավենի | 23.11.1975 | <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ | Բարձրագույն | Մանկավարժական խորհուրդ | 22տարի | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 3. Գևորգյան Հերմինե Ռոմելի | 27.11.1987 | <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ ուսուցիչ | Բարձրագույն | Մանկավարժական խորհուրդ | 15տարի | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 4. Գևորգյան Նելլի Նորիկի | 05.09.1985 | Չի աշխատում | Միջնակարգ | Դպրոցի ծնողական խորհուրդ | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 5. Պետրոսյան Գուրգեն Լնիկի | 20.08.1976 | Անհատական գործունեություն | միջնակարգ | Վերադաս | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 6. Վարդանյան Տիգրան Ավետիքի | 11.08.1971 | «Արա-Սուրեն» ՍՊԸ | Միջին մասնագիտական | ԿԳՄՍ | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 7.Մելոյան Օվկիան Գևորգի | 24.11.1971 | «Կապուտակ Սևան » հյուրանոցային համալիր | Միջին մասնագիտական | Վերադաս | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |
| 8. Պետրոսյան Կարեն Հայրապետի | 02.06.1986 | <<ՀԷՑ Սևանի մասնաճյուղ >>ՓԲԸ | Միջն մասնագիտական | Դպրոցի ծնողական խորհուրդ | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 27.09.2022N245-Ա |
| 9.Գևորգյան Հովիկ Մամիկոնի | 02.01.1978 | <<Սևան ազգային >>ՊՈԱԿ | Միջնակարգ | Վերադաս | | ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 10.05.2021N245-Ա |

***Խորհրդակցական մարմիններ***




***Մանկավարժական խորհուրդ***

Ձևավորվում է տնօրենի հրամանով, յուրաքանչյուր ուսումնական տարվա մանկավարժական խորհրդի առաջին նիստում:

Մանկխորհի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստեր են գումարվում:

Մանկխորհի աշխատանքը ղեկավարում է դպրոցի տնօրենը:

Մանկխորհը քննարկել է.

- ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը,
- աշակերտի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը,
- Հանրակրթական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների ընդունակություններին ու հակումներին, նրանց կյանքի և առողջությանը համապատասխան,

- սովորողների ուսումնառության որակի, ուսուցման բովանդակության, նրանց հետ իրականացվող արտադպրոցական և արտադասարանական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների ձևավորման հարցեր,
- ԿԱՊԿՈւ սովորողի անհատական ուսուցման պլանը:

Մանկխորհը որոշումներ է ընդունել.

- աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին,
- սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրերով պարգևատրելու մասին,
- սովորողների դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքեր տալու մասին,
- բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին,
- որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու մասին,
- սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին,
- դպրոցի ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին,
- շրջանավարտին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու մասին,
- դպրոցի ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին:

Նիստերին երբեմն խորհուրդի որոշ անդամներ չեն մասնակցում, բայց միշտ անհրաժեշտ քվորումը ապահովվում է, և դպրոցի աշխատանքը դրանից չի տուժում: Նիստերը անցկացվում են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան՝ բոլոր անդամները ազատ են իրենց կարծիքը արտահայտելու, նոր առաջարկ անելու կամ չհամաձայնվելու քննարկվող հարցերի շուրջ:

Դպրոցում կրթական գործընթացին օժանդակող խորհրդատվական՝ տեղեկատվական, հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, հատուկ մանկավարժական, մեթոդական, առողջապահական և այլ բնույթի ծառայություններ մատուցելու հարցը քննարկվում է նիստերում:

***<u>Ծնողական խորհուրդ</u>***

Ծնողական խորհուրդը բաղկացած է 23 անդամից: Ծնողական խորհուրդը համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհուրդի հետ, նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքերին: Ծնողական խորհուրդը տնօրինությանը առաջարկություններ է ներկայացնում ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ: Կազմակերպում է ճանաչողական այցեր, էքսկուրսիաներ:

Ծնողական խորհուրդը աջակցում է դպրոցի սոցիալապես անապահով ընտանիքների և ծնողազուրկ երեխաներին: Ծնողական խորհուրդը ծնողներին տեղյակ է պահում դպրոցի առօրյայի և տեղի ունեցող իրադարձությունների մասին:

Ծնողական խորհուրդը պարբերաբար հանդես է եկել և տնօրենի կամ մանկխորհի քննարկմանն է ներկայացրել իրենց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, պարտականությունների մեջ թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու և մանկավարժների խրախուսման վերաբերյալ առաջարկություններ: Հետաքրքրություն է ցուցաբերում ուսումնական հաստատության գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և տնօրենից ստանում է իրեն հետաքրքրող հարցերի պարզաբանումներ: Ծնողական խորհուրդը բավականին ներգրավված է աշակերտների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը, ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում:

Հարկ է նշել, որ ծնողական խորհուրդը որոշ հարցերում թերանում է՝ մասնավորապես անցկացվող նիստերում որոշ անդամներ ցուցաբերում են պասիվություն, նիստերում հիմնականում քիչ են քննարկվում դպրոցի հետաքրքրություններից բխող կարևոր հարցեր, աջակցություն չի ցուցաբերում դպրոցին դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակության, սոցիալական աջակցություն կազմակերպելու հարցերում, խորհուրդի մաս չկազմող ծնողներին ակտիվորեն չի ծանոթացնում իրենց իրավունքներին, պարտականություններին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը, սեմինարներ, խորհրդատվություններ՝ ծնողներին տեղեկատվությամբ ապահովելու կազմակերպման հարցերում ակտիվություն չի դրսևորում: Ընդհանուր առմամբ ծնողական խորհուրդը պետք է նպաստի դպրոցի և ծնողների միջև կապերի ամրապնդմանը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության հարցերում ձևավորի միասնական պահանջներ: Այս հարցերում ծնողների մոտիվացման համար պետք է տանել հետևողական, բացատրական աշխատանքներ, կազմակերպել սեմինարներ, քննարկումներ և այլն:

***<u>Աշակերտական խորհուրդ</u>***

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ընտրությունների միջոցով ձևավորրվում է դպրոցի աշակերտական խորհուրդը: Դպրոցի աշակերտական խորհուրդը կազմված է 23 անդամից: Աշակերտական խորհուրդը.

- գործում է ինքնավարության և ժողովարդավարության սկզբունքներին համապատասխան,
- աջակցում է ուսման մեջ կամ այլ հարցերում դժվարություններ ունեցող սովորողներին,
- միջոցներ է ձեռնարկում սովորողների միջև եղած տարաձայնությունները հարթելու նպատակով,
- Կազմակերպում է շաբաթօրյակներ, մշակութային և մարզական միջոցառումներ:

Աշակերտական խորհրդի նախագահը մասնակցել է մանկխորհի որոշ նիստերի, որոնք առնչվել են անմիջապես սովորողների կրթության բարելավման հարցերին: Այնուամենայնիվ,

աշակերտական խորհուրդը՝ ինքնավարության և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան, անմիջականորեն սովորողներին վերաբերող հարցերի մասին ազատորեն կարծիք չի ներկայացնում կառավարման և խորհրդակցական մարմիններին: Նշենք նաև որ կառավարման և խորհրդակցական մարմինների անդամները միշտ չէ, որ կարևորում են աշակերտների մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացին:

Աշխորհի աշխատանքները համակարգելու և բարեհաջող իրագործելու համար ձևավորվել են դպրոցի հերթապահությունը վերահսկող, միջոցառումների կազմակերպումը վերահսկող, ծաղիկների խնամքը վերահսկող հանձնախմբեր: Աշխորհի նախաձեռնությամբ ընթացիկ տարում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ նվիրված մայրության և գեղեցկության, հաղթանակի, զիտելիքի, անկախության, ուսուցչի և այլ նշանավոր օրերի առթիվ: Աշխորհի նախագահը ակտիվ համագործակցելով դաստիրակչական աշխատանքների կազմակերպիչի հետ պարբերաբար կազմակերպում և իրագործում են դպրոցի շենքի և շրջակա միջավայրի մաքրման, կանաչապատման և ներքին կարգապահական աշխատանքներ:

Սովորողները բավականին կապված են դպրոցի հետ, այդ է փաստում աշխորհի աշխատանքը և այն, որ ավարտելուց հետո շրջանավարտները պարբերաբար այցելում են դպրոց, հետաքրքրություն ցուցաբերում դպրոցում առկա խնդիրներին և պատրաստակամ են իրենց մասնակցությունը ունենալու դպրոցի ուսումնադաստիարակչական, արտադպրոցական միջոցառումներին և այլ հարցերում:

Այսպիսով, չնայած նրան, որ աշխորհի ծավալում է որոշակի ակտիվ գործունեություն, այնուամենայնիվ, իմ գնահատմամբ այն ամբողջությամբ չի օգտագործում իր ներուժը, որը կարող էր օգնել կրթության որակի բարձրացմանը, իհարկե, պատճառներից մեկն էլ խորհրդակցական մյուս մարմինների հետ համագործակցության պասիվությունն է, որի շտկման համար պետք են հետևողական և նպատակային աշխատանքներ:

***<u>Առարկայական մեթոդական միավորումներ</u>***

Դպրոցում գործող մեթոդմիավորումներն են՝

1. Տարրական դասարանների մ/մ
2. Հայոց լեզվի և գրականության մ/մ
3. Բնագիտական առարկաների մ/մ
4. Օտար լեզուների մ/մ
5. Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի մ/մ
6. Պատմություն և հասարակագիտություն առարկաների մ/մ
7. Տեխնոլոգիայի, ֆիզկուլտուրայի և ռազմագիտության մ/մ

Մեթոդական միավորումները աշխատում են ըստ իրենց գործառույթների:

- Մեթոդմիավորումը քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշչին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը,
- քննարկում է ԿԱՊԿՈւ սովորողի անհատական ուսուցման պլանը,
- սկսնակ ուսուցչին նախապատրաստում է ատեստավորման,

- նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը,
- կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական, մեթոդական խորհրդատվություններ,
- մանկխորհի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություններ,
- կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություններ է ներկայացնում տնօրենին:

*Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծությունը.*

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Կառավարման խորհուրդը մշտապես գործել է ուսումնական հաստատության կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան,<br>• մանկխորհի նիստերը կանոնավոր կերպով գումարվում են, անհրաժեշտ քվորումը միշտ ապահովվում է,<br>• մանկխորհի նիստերը գումարվում են ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան,<br>• առարկայական մ/մ-ները գործում են իրենց լիազորությունների սահմաններում և կատարում են իրենց բոլոր պարտականությունները,<br>• աշակերտական խորհուրդը գումարում է նիստեր, ընդունում որոշումներ և իրագործում դրանք,<br>• աշակերտական խորհուրդը հանդես է գալիս նախաձեռնողականությամբ և կազմակերպում մի շարք միջոցառումներ,<br>• աշակերտական խորհուրդն իր աշխատանքները կանոնակարգում է իր կողմից ձևավորված հանձնախմբերի միջոցով,<br>• ծնողական խորհուրդը պարբերաբար հանդես է գալիս մի շարք կարևոր առաջարկություններով,<br>• ծնողական խորհուրդն ապահովում է երեխաների իրավունքների պաշտպանությունը դպրոցում,<br>• ծնողական խորհուրդը ներգրավված է աշակերտների արտադպրոցական և | • Խորհրդակցական մյուս մարմինների և աշակերտական խորհրդի պասիվ համագործակցությունը,<br>• ծնողական խորհուրդն ակտիվ աջակցություն չի ցուցաբերում դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակության, սոցիալական աջակցության կազմակերպման հարցերում,<br>• ծնողական խորհուրդը խորհրդի անդամ չհանդիսացող ծնողների հետ բավարար աշխատանքներ և իրազեկման միջոցառումներ չի իրականացնում,<br>• Խորհրդակցական մարմինների և կառավարման խորհրդի միջև թույլ համագործակցություն: |

| | |
|---|---|
| արտադասարանական միջոցառումներում: | |

***<u>Հնարավորություններ և առավելություններ.</u>***

- Աշակերտական խորհուրդը ունի մեծ ներուժ առավել ակտիվ գործունեությամբ զբաղվելու համար:
- Շրջանավարտները պատրաստակամ են հետագա համագործակցության համար:
- Ծնողական խորհուրդը բաց է համագործակցության շրջանակը ընդլայնելու համար:
- Մանկխորհի անդամների մեծ մասը նախաձեռնողական են:

# 4. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

***Հաստատությունն համագործակցում է կրթության պետական կառավարման մարմնի և այլ շահառու կազմակերպությունների հետ***

- Հաստատությունը իրականացնում է կրթության կառավարման մարմնի հրամաններն ու հրահանգները:
- Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից երաշխավորվել է «մեղվաբուծություն», «Ազգային ծեսեր և տոներ», «Հմուտ ձեռքեր, «Պատմության քառուղիներում», «ասեղնագործություն», «ես և բնությունը», «հետաքրքրաշարժ ֆիզիկա» և «ձեռագործություն խմբակների ծրագրերը:
- Դպրոցը համագործակցում է ԿՏԱԿ-ի, «Վորլդ Վիժն Հայաստան»-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի, ՏՄԱԿ-ի, «Օհմ Էներջի» ընկերության, «Ջինիշյան հիմնադրամ»-ի, «EduArmenia»-ի, «ԻՄ ԴՊՐՈՑԻ», Ինտերակտիվ հիմնադրամի, ՃՇՀԱՀ-ի, Ագրարային համալսարանի հետ, Տարածքային ոստիկանության անչափահասների բաժնի հետ, ԱԻՆ փրկարարական ծառայության հետ, «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի «Սևանի ընկերներ» կազմակերպության հետ, Սևանի համայնքային գրադարանի հետ, «Մանկապատանեկան կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, Սևանի պետական բազմագործառութային քոլեջի հետ, Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի հետ:

***Դպրոցի համագործակցությունը կրթության կառավարման մարմինների հետ***

Օրենսդրությանը համապատասխան դպրոցը համագործակցում է Կրթության կառավարման լիազոր մարմինների հետ: Դպրոցի բնականոն գործունեությունը, դրա կառավարումն ու վերահսկողությունը իրականացվում է լիազոր կառավարման մարմինների շնորհիվ: Դպրոցի գործունեության համար անհրաժետ ֆինանսավորումը կատարվում է կառավարման լիազոր մարմնից: Կառավարության ընդունած բոլոր հրամանները, որոշումները, իրավական ակտերը անմիջապես կատարվում են դպրոցի կողմից: Դպրոցի արդյունավետ գործունեության համար մշակվում են ներքին կարգապահական կանոններ, ներքին իրավական ակտեր և կիրառում աշխատանքում, նորմատիվ փաստաթղթերը, դրանց օրինակելի ձևերը ներկայացվում են կրթության կառավարման մարմիններին:

Դպրոցը տարին մեկ անգամ իր գործունեության մասին տարեկան հաշվետվություն է ներկայացնում լիազոր մարմնին: Այն է հաստատում դպրոցի նախահաշիվը, տարիֆիկցիան և կատարում է դպրոցի արտաքին գնահատումը: Պարբերաբար դպրոց են այցելում լիազոր մարմնի ներկայացուցիչները, իրականցնում ստուգումներ, տեղեկանում դպրոցի համար կարևոր հիմնահարցերին և խորհրդատվական կարգով լուծումներ են առաջարկում:

***Դպրոցն ակտիվորեն համագործակցում է համայնքի հետ***

Դպրոցի գործունեության բարելավման կարևոր գործոն է համարվում ընտանիքի, ծնողների և համայնքի մասնակցությունը: Մասնակցության բարձրացման կարևոր գործոններից է դպրոցի կողմից իրականացված քայլերը, որոնք ուղղված են տեղական

ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև համայնքային այլ կառույցների հետ համագործակցության բարելավմանը:

Համայնքապետարանի և դպրոցի կազմակերպած համատեղ արտադպրոցական միջոցառումների շնորհիվ դպրոցի հանրային հեղինակությունը և ընկալումը համայնքում շատ դրական է: Տարբեր միջոցառումների ժամանակ, նույնիսկ, ուրիշ համայնքների բնակիչների կողմից շատ հաճախ լսվում են գովեստի խոսքեր մեր դպրոցի հասցեին: Աշխատանքներ կտարվեն արտադպրոցական և արտադասարանական համատեղ միջոցառումները համայնքապետարանի հետ ավելացնելուն ուղղված, քանի որ կա համագործակցությունը խորացնելու մեծ հեռանկար:

Մինչև համայնքների խոշորացումը պարբերաբար ավագ դասարանների աշակերտները մասնակցում էին Ծովագյուղ համայնքի ավագանու նիստերին՝ բյուջեի քննարկմանը:

Դպրոցի աշակերտներն ակտիվորեն մասնակցում են արտադասարանական խմբակների՝ պար, նկարչություն, շախմատ, կարատե:

Հաստատությունն ակտիվորեն համագործակցում է

- մարզային և համայնքային գրադարանի հետ՝ կազմակերպվել են գրողներին նվիրված ցերեկույթներ, գրքերի քննարկումներ,
- մանկապարտեզի հետ՝ կազմակերպվել են մարզախաղեր մանուկների համար, տիկնիկային ներկայացումներ,
- գյուղի առողջության առաջնային պահպանման կենտրոնի հետ՝ բժշկի և բուժքույրերի կողմից ավագ դասարանների սովորողների հետ իրականացվել են սեմինարներ, զրույցներ առողջ ապրելակերպի մասին, ալկոհոլի, ծխախոտի օգտագործման և դրանց հետևանքների մասին: Ցածր դասարանների սովորողների և նրանց ծնողների հետ իրականացվել են զրույցներ երեխաների ճիշտ ռեժիմի, առողջ ապրելակերպի և սննդակարգի, վնասակար սովորությունների մասին:

Դպրոցի աշակերտների և ուսուցիչների կողմից համայնքի բնակիչների համար կազմակերպվում են մի շարք միջոցառումներ. հունվարի 28-ին՝ Բանակի օրվան նվիրված, ապրիլի 24-ին՝ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված, մայիսի 15-ին՝ Ընտանիքի օրվան նվիրված, սեպտեմբերի 21-ին՝ Անկախության տոնին նվիրված, հոկտեմբերի 5-ին՝ Ուսուցչի տոնին նվիրված և տարատեսակ այլ միջոցառումներ:

***Դպրոցի մանկավարժներն ու աշակերտներն ակտիվորեն մասնակցություն են ունենում համայնքային միջոցառումներին***

| **Գործունեության տեսակ** | **Ժամանակ** | **Մասնակիցների թիվ** |
|---|---|---|
| Շաբաթօրյակներ | Ամեն տարի 3-4 անգամ | 300 սովորող,<br>բոլոր աշխատողները |
| Ծառատունկ | Աշուն-գարուն | 100-150 սովորող<br>Բոլոր աշխատողները |

| | | |
|---|---|---|
| Երկրորդ համաշխարհային պատերազմում զոհվածների, Արցախյան պատերազմում զոհվածների և Եղեռնի հիշատակի հուշահամալիրների խնամք /ծաղիկների, ծառերի տնկում, մաքրում/ | Գարուն, աշուն 3-4 անգամ | 30 սովորող<br>7-8 ուսուցիչ |

*Համայնքի բնակիչներն օգտվում են դպրոցի մարզադահլիճից և ֆուտբոլի խաղադաշտից*

| **Գործունեության տեսակ** | **Ժամանակ** | **Մասնակիցների թիվ** | **Լրացուցիչ տեղեկություններ** |
|---|---|---|---|
| Մարզախաղերի կազմակերպում մարզադահլիճում | Ամիսը 1-2 անգամ | 45-50 | Մրցույթներ են կազմակերպվում միջհամայնքային թիմերի հետ |
| ֆուտբոլի մրցաշարի կազմակերպում | Ամառային ամիսներին | Ծովագյուղի ֆուտբոլի թիմ, Սևանի և հարակից այլ համայնքների ֆուտբոլի թիմեր | |

***Դպրոցի համագործակցությունը ծնողների հետ***

Մասնակցության առաջնային և կարևորագույն ձևն է՝ ընտանիքի կողմից երեխայի հանդեպ խնամքը, հոգածությունը և ուշադրությունը, ներառյալ երեխայի կանոնավոր հաճախումը դպրոց ապահովելը:

Դպրոց հաճախող տարրական դպրոցի աշակերտների ծնողներն հետևողական են և ուշադիր, բոլոր սովորողները դպրոց են հաճախում խնամված, տնային հանձնարարությունները կատարած, անհրաժեշտ գրենական պիտույքներով և դասագրքերով: Հաճախումների ցուցանիշը բարձր է, բացակայությունները հիմնականում լինում են հիվանդության պատճառով: Ծնողներն ակտիվորեն մասնակցում են ծնողական ժողովներին, արտադասարանական միջոցառումներին, բաց դասերին, սննդի կազմակերպման աշխատանքներին:

Հիմնական դպրոցի՝ 5-9-րդ դասարանների աշակերտների ծնողները քիչ թվով են դասալսումներ իրականացնում, ծնողների 15-20% ավելի քիչ է հետևողական լինում երեխայի տնային հանձնարարությունների կատարմանը, հագուստին, սննդին, որոնց պատճառներն ըստ անանուն հարցումների տարբեր են՝

1. ծնողների աշխատանքից ուշ տուն վերադառնալը

2. ծնողների գիտելիքների չբավարարելը երեխային աջակցելու համար

3. պարզապես անտարբեր լինելը երեխայի կրթության և դաստիարակության նկատմամբ

4. երեխայի՝ դպրոց կանոնավոր հաճախումների չկարևորելը:

Ավագ դպրոցի (10-12-րդ) սովորողների ծնողներից 25-30% պասիվ են մասնակցում ծնողական ժողովներին, բաց դասերին, դասալսումներին: Ծնողների մի մասը չի կարողանում վերահսկել աշակերտների դասապատրաստմանը և հաճախումներին: Ավագ դասարանների տղաներից շատերը պասիվ են դպրոցում կազմակերպվող միջոցառումներին, հաճախակի բացակայում են: Դպրոցում իրականացվում են ամենօրյա հաճախումների ստուգումներ և ստուգվում բացակայությունների պատճառները, կանխվում անհարկի բացակայությունները:

Յուրաքանչյուր ուստարվա վերջում շնորհակալագրերով են պարգևատրվում այն ծնողները, որոնք ակտիվ մասնակցություն են ցուցաբերում հաստատության աշխատանքներին և կառավարմանը:

Ուսումնական հաստատության համագործակցությունը ծնողների հետ բարձր մակարդակում տեղի է ունենում ծնողական խորհուրդի միջոցով, բայց դպրոցը անկախ նրանից, ծնողը ծնողխորհրդի անդամ է, թե ոչ, համագործակցում է բոլորի հետ անհատապես՝ իրենց երեխայի առանձնահատկությունները հաշվի առնելով: Այնուամենայնիվ, ծնողների հետ համագործակցության, նրանց դպրոցի գործունեության համար կարևոր խնդիրների լուծման, արտադպրոցական և արտադասարանային միջոցառումներում ներգրավելու հարցում դեռ աշխատանքներ պետք է տարվեն, քանի որ մարդկային ռեսուրսի այս տեսակը օգտագործվում է թերի:

***Դպրոցի համագործակցությունը շահառու այլ կազմակերպությունների հետ***

Դպրոցն իր բնականոն գործունեությունը ապահովելու համար համագործակցում է մի շարք շահառու կազմակերպությունների հետ: Համագործակցությունը կատարվում է օրենքի տարին համապատասխան և շուկայական գնագոյացմամբ յուրաքանչյուր կազմակերպության հետ կնքվում է պայմանագիր՝ իր մատուցած ծառայությունների և սակագների վերաբերյալ: «Դպրոցական սնունդ և երեխաների բարեկեցություն» ծրագրի շրջանակներում տաք սննդից օգտվում են դպրոցի տարրական դասարանների 222 աշակերտներ:

### 4.1. Համագործակցության շրջանակներում ընթացիկ և ակնկալվող աշխատանքներ

«Վորլդ Վիժըն» բարեգործական կազմակերպությունն արդեն երկար տարիներ դպրոցի կողքին է: Կազմակերպության ջանքերով իրականացվել են դպրոցական և արտադպրոցական բազմաթիվ միջոցառումներ: «Վորլդ Վիժըն»-ի կողմից դպրոցն ստացել է տպիչներ, գրքեր, քիմիայի և ֆիզիկայի լաբորատորիայի գույք, պրոյեկտոր, ձայնարկիչներ, բարձրախոսներ: Կորոնավիրուսի համաճարակի ժամանակ ևս «Վորլդ Վիժըն»-ը դպրոցի կողքին էր և տրամադրեց անհրաժեշտ հակահամաճարակային պարագաներ: «Վորլդ

Վիժըն»-ի նախաձեռնությամբ դպրոցում գործում է «Բանավեճի ակումբ» խմբակը, որին մասնակցող սովորողները հանրապետության տարբեր դպրոցներում բանավեճի սեղանի շուրջ քննարկել են կրթության ոլորտին վերաբերող բազմաթիվ հարցեր: «Վորլդ Վիժըն»-ը կազմակերպել է ամառային ճամբարներ, ուր ընդգրկվել են դպրոցից շատերը:

2022թ. դպրոցը համագործակցում է «Շրջակա միջավայր և առողջություն» ՀԿ-ի «Սևանի ընկերներ» կազմակերպության հետ: Աշխարհագրության ուսուցիչները և մի խումբ աշակերտներ պարբերաբար մասնակցում են Սևանա լճի էկոլոգիական հիմնախնդիրներին նվիրված միջոցառումներին, «Սևանի ընկերներ» ծրագրին, որի նպատակն է երիտասարդների շրջանում բարձրացնել Սևանա լճի հիմնախնդիրների և լուծումների մասին իրազեկությունն ու նպաստել վարքագծի փոփոխությանը:

2022թ. դպրոցի սաները մասնակցել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ «ԴԻ-ՎԻ-ՎԻ ինթերնեյշնալ» հայաստանյան գրասենյակի կողմից իրականացրած «ԿԶՆ կանգառ Սևանում» երիտասարդական փորումին:

2022 թ մարտ ամսին ավագ դպրոցից 13 աշակերտ մասնակցել են ՀՊՄՀ –ի 100-ամյակի առթիվ կազմակերպված օլիմպիադայի երեք փուլերին:

2022թ հունիսի 1-ին Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում դպրոցի 5 աշակերտ հանդես են եկել «Երեխայի իրավունքները երեխաների աչքերով» զեկույցով:

2021թ մայիսին աշակերտները մասնակցել են «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ բանիմաց և ակտիվ երիտասարդներ հանուն ժողովրդավար Հայաստանի՝ այսօր և վաղը» ծրագրին և ստացել շնորհակալագրեր ու պատվոգրեր:

Դպրոցը սիրով աշխատել և շարունակում է աշխատել հասարակական և բարեգործական տարբեր կազմակերպությունների հետ: «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» (ՏԶՀԿ) հասարակական կազմակերպության հետ դպրոցը համաձայնության է եկել նախկին կաթսայատան առանձին մեկ հարկանի դատարկ շինությունը դարձնել «Համայնքային նորարարարական ուսումնացուցադրական կենտրոն», ուր սովորողները կստանան բնապահպանության, բուսաբուծության, համայնքային զարգացման և սոցիալական ձեռնարկատիրության թեմաներով անվճար և պրակտիկ ուսուցում անցնելու հնարավորություն: Համագործակցության արդյունքում նախատեսվում է տարածքը դարձնել ժամանակակից էներգաարդյունավետության ստանդարտներին համապատասխան շինություն՝ որպես ցուցադրական օրինակ և դպրոց-հյուրատուն:

2018-2023 թվականներին դպրոցի շենքային պայմանների բարեկարգման աշխատանքները շարունակական են եղել: Կատարվել են բազմաթիվ աշխատանքներ: Կիսատ է մնացել դպրոցի տարրական մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքի հատակի սալիկապատման ծրագիրը. լիազոր մարմնի կողմից թույլտվություն ստանալու պարագայում նախատեսվել է տարրական մասնաշենքի երկրորդ հարկի միջանցքի հատակը սալիկապատել:

2026-2027 ուսումնական տարվանից դասարանների կազմավորման համար նախատեսվում է պարտադիր դարձնել տարրական և միջին մակարդակում առավելագույնը 25 և ավագ մակարդակում՝ առավելագույնը 20 սովորող ունենալը: Աշակերտների թվի

աճով պայմանավորված և դպրոցում դասարանների քանակի ավելացման հետևանքով առաջանում է դասարանների տեղավորման խնդիր և դասասենյակների պակաս: Քանի որ 2023թ մարտի 20-ին «Կրթական ծրագրերի կենտրոն»-ի հետ կնքվել է դրամաշնորհային պայմանագիր՝ Նախադպրոցական կրթության միկրոծրագիր իրականացնելու նպատակով և տարրական մասնաշենքից երկու դասարան և մեկ աշխատասենյակ հատկացվել է նախակրթարանին, այդ պատճառով ևս պակասել են դասասենյակները և այդ մասնաշենքի ուսուցիչների աշխատասենյակը ուստի անհրաժեշտություն է առաջանում ավելացնել դասասենյակների թիվը: Առաջիկայում սպասվում է երեխաների թվի աճ. 2017 թվականին ծնված երեխաների թիվը 62 է, 2020 թվականին ծնված երեխաների թիվը՝ 83:

2026-2027 ուսումնական տարում առաջին դասարանցիների թիվը կանխատեսվում է 83, որի պարագայում ձևավորվելու է 4 դասարան: 2023թ. դրությամբ Սևան համայնքի գյուղական բնակավայրերից Ծովագյուղը բնակչության թվով առաջիններից է, հետագայում ակնկալվում է երեխաների թվի աճ, ինչը թելադրում է դպրոցի նոր մասնաշենքի կառուցում՝ ապաստարանով, քանի որ դպրոցը չունի ապաստարան, իսկ հաշվի առնելով նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովագյուղ գյուղի աշխարհագրական դիրքը, դպրոցում ապաստարան ունենալը անհրաժեշտ է: Օտար լեզու, ինֆորմատիկա, հայոց լեզու կիսվող առարկաների համար ևս դասասենյակների պակաս լինելու խնդիր է առաջանում:

Վերոնշյալ խնդիրների պատճառով նախատեսվում է դիմել լիազոր մարմնին և հիմնադրին՝ թույլտվություն խնդրել նոր մասնաշենք (իր ապաստարանով) կառուցելու համար և ակնկալել պետության, համայնքի աջակցությունը:

«Վորլդ Վիժըն»-ի կողմից դպրոցի հարակից տարածքում տեղադրվել է ջերմոց: Նախատեսվում է դպրոցի աշխատակիցների և սովորողների ջանքերով ջերմոցում աշխատանքներ կատարել, ինչպես նաև դպրոցի շրջակայքում տնկել վարդերի տնկիներ, պտղատու ծառեր, հիմնել այգի:

«Մեղվաբուծություն» խմբակի ծրագրի շրջանակում նախատեսվում է ձեռք բերել մեղվի փեթակներ և աշակերտներին ավելի պրակտիկ սովորեցնել մեղվաբուծություն:

«Օհմ էներջի» կազմակերպության միջնորդությամբ 2022թ մարտի 2-ին UAB ,,Solet Technies" vardu /On behalf of UAB ,,Solet Technies" կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր դպրոցում արևային համակարգ տեղադրելու մասին՝ որպես այլընտրանքային էլեկտրաէներգիայի ստացման աղբյուր: Քանի որ տարեկան մոտ տասը միլիոն դրամ հատկացվում է դպրոցի լոկալ ջեռուցմանը և հոսանքի ծախսին: Դպրոցի ֆինանսական միջոցները խնայելու և մշտական էներգիա ունենալու նպատակով սկսվել է համագործակցությունը «Օհմ էներջի» կազմակերպության հետ: Կատարվել է ուսումնասիրություն, կարգավորվել են փաստաթղթերը, արդեն դպրոցում տեղադրվել են արևային վահանակները, ընթանում են միացման աշխատանքները:

Նախագծված աշխատանքների թվում է դպրոցում «Թումո» կրթական կենտրոնի հիմնումը: ՀՀ կառավարության 11.05.2023թ. N712-Ա որոշմամբ դպրոցից 150քմ տարածք է հատկացվել «Թումո» կրթական կենտրոնի բացման համար, ինչը ժամանակի պահանջ է և 21-րդ դարի քաղաքացի ձևավորելու կարևորագույն բաղադրիչ: *«Թե ուզում ես երգդ լսեն, ժամանակի շունչը դարձիր, /Ե. Չարենց/»*

Կրթության բնագավառում սահմանված է առանձին և շատ կարևոր նպատակ՝ ապահովել ներառական ու ծրագրավորված որակյալ կրթություն և խթանել կրթության հնարավորությունները բոլորի համար ողջ կյանքի ընթացքում:

Դպրոցի առջև խնդիր է դրված ձևավորել ողջ կյանքի համար կիրառելի գիտելիքներով, հմտություններով, կարողություններով, արժեհամակարգով օժտված անհատներ:

# 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Դպրոցի ուսումնական միջավայրը առարկայական կաբինետների և դասասենյակների, սարքավորումների, դասագրքերի և այլ գրականության, դպրոցում ձևավորված սովորելու և սովորեցնելու ավանդույթի, դպրոցի ներսում և դրսում առկա հասարակական հարաբերությունների ամբողջությունն է: Դպրոցի մանկավարժները, աշակերտները և վարչական կազմը օգտվում են գրադարանի ծառայությունից: Գրադարանում կազմակերպվում են ցերեկույթներ, գրքերի քննարկումներ, գրողներին նվիրված միջոցառումներ: Բոլոր աշակերտներն ապահովված են դասագրքերով: Գրադարանը հագեցած չէ նոր սարքավորումներով և գույքով, նոր ուսումնաօժանդակ գրականությամբ: Դպրոցը չունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ ռազմագիտության, աշխարհագրության, կենսաբանության և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ, այդ թվում՝ լրացուցիչ կրթական ծրագրերի և արտադպրոցական կրթության իրականացման համար / նկարչական, լուսանկարչական, երաժշտական և այլն/, որոնք հագեցած են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնանյութական և ուսումնադիտակտիկ նյութերով: Երկար դասամիջոցներին տարրական դպրոցի աշակերտները սնվում են ճաշարանում: Դասամիջոցներին կազմակերպվում են շարժախաղեր գնդակներով, օղակներով և ցատկապարաններով: Դպրոցում կազմակերպվում են արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, վիկտորինաներ, համերգային ծրագրեր, բասկետբոլի, վոլեյբոլի, թենիսի մրցույթներ, բեմականացումներ, նկարչության մրցույթներ: Միջին և ավագ դասարանների սովորողները երկար դասամիջոցներին կամ դասերի ավարտին թենիս են խաղում: Դպրոցի աշակերտները մասնակցում են տարբեր արտադասարանական և արտադպրոցական խմբակների.

«Մեղվաբուծություն» խմբակ - 17 աշակերտ

«Ձեռագործություն» խմբակ - 11 աշակերտ

«Ասեղնագործություն» խմբակ - 15 աշակերտ

«Մեր լեզուն, մեր արժեքները» խմբակ - 16 աշակերտ

«Պատմամշակութային Հայաստան» խմբակ - 15 աշակերտ

«Զարմանահրաշ կենդանի մոլորակ» խմբակ - 14 աշակերտ

«Հմուտ ձեռքեր» խմբակ - 12 աշակերտ

Մարզական խմբակներ-45 աշակերտ

Պարի խմբակ-60 աշակերտ

Նկարչության խմբակ- 25 աշակերտ

«Արմաթ» ինժեներական լաբորոտորիայի ռոբոտաշինության խմբակ-20 աշակերտ

Բոլոր դասարաններում կազմակերպվում են արշավներ, էքսկուրսիաներ, այցելություններ մշակույթի օջախներ, թանգարաններ:

## 5.1. Հաստատությունում հավասարության և ներառական կրթության ապահովումը

Ուսումնական հաստատությունը առաջնորդվում է երեխաների իրավունքների պահպանման և ժողովրդավարական դպրոցի ձևավորման սկզբունքներով: Դպրոցը փորձում է ապահովել այնպիսի կրթական միջավայր, որը հնարավորություն կտա սովորողներին քննադատաբար վերլուծել սոցիալական, քաղաքական, մշակութային և էթիկական արդիական հարցեր, խնդիրներ կամ իրադարձություններ՝ օգտագործելով տեղեկություններ տարբեր աղբյուրներից, իհարկե, այս մոտեցումը չեմ կարող ասել, որ լիարժեք աշխատում է, քանի որ մանկավարժ-աշակերտ համագործակցությունը մեծ մասամբ դուրս չի գալիս սովորական դասաժամ անցկացնելու կաղապարից, չնայած պետք է նշել, որ վերջին տարիներին հատկապես երիտասարդ ուսուցիչների կողմից նկատվում են դրական տենդենցներ դասապրոցեսը կազմակերպելիս նորարարությունների ներդրման հարցում:

Այս համատեքստում պետք է նշել, որ ուսումնական հաստատությունը ձգտում է յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունք ապահովելը:

*Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը*՝ խոսքի և լեզվի, հաղորդակցման, տեսողության, լսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, շարժունակության, վարքի և այլ խնդիրներով պայմանավորված՝ ուսուցման հետ կապված դժվարություններ ունեցող, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող անձն է, որին հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ, ներառյալ՝ խելամիտ հարմարեցումներ: Պետք է նշել, որ դպրոցում դեռ ապահովված չեն անհրաժեշտ հարմարեցումները կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների համար, ինչի ուղղությամբ ձեռնարկվելու է անհրաժեշտ քայլեր:

*Ներառական կրթությունը* ենթադրում է, որ սովորողներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք կողքի, նույն հաստատությունում և դասարանում: Ներառական կրթությունը շատ բարձր է գնահատում ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի ներդրումը: Ներառական կրթության հիմքում մարդու՝ կրթությունից օգտվելու իրավունքն է, կրթական համակարգը ներառական է՝ եթե ներառում է բոլոր աշակերտներին և օժանդակում ու ողջունում է նրանց սովորելու հարցում: Ոչ ոք չպետք է բացառվի, բոլոր երեխաները՝ ներառյալ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողները, ունեն կրթության իրավունք: Այս նպատակի իրականացման համար թերևս շատ կարևոր քայլ էր ուսուցչի օգնականի հաստիքի ավելացումը դպրոցի մանկավարժական համակազմում:

Դպրոցում ներառական կրթությունը ենթադրում է այնպիսի կրթական միջավայրի և պայմանների ստեղծում, որոնցում բոլոր աշակերտները, անկախ իրենց առանձնահատուկ կրթական կարիքներից ունեն հավասար հնարավորություններ կրթություն ստանալու համար։

դպրոցի զարգացման ծրագրում որպես նպատակ ամրագրված է ներառական կրթության զարգացումը։

Դպրոցում բոլոր երեխաների համար.

1. ստեղծված են հավասար պայմաններ դպրոց ընդունվելու և սովորելու համար՝ անկախ նրանց կարողություններից, կարիքներից և սոցիալական անապահովության աստիճանից։

2. ապահովվում է բոլոր աշակերտների հավասար մասնակցություն ուսումնառության գործընթացին՝ անկախ նրանց կարողություններից, կարիքներից և սոցիալական անապահովության աստիճանից։

3. ապահովվում է բոլոր սովորողների համար կրթության արդյունքներին հասնելը և առաջադիմության ցանկալի մակարդակը անկախ նրանց կարողություններից, կարիքներից և սոցիալական անապահովության աստիճանից։

Դպրոցում իրականացվել են ներառական կրթության ապահովման համապատասխան միջոցառումներ, այդ թվում ուսուցիչների վերապատրաստումներ

- 2019 թ-ին 2 ուսուցիչներ, 3 վարչական աշխատողներ
- 2020 թ-ին 18 ուսուցիչներ, 2 վարչական աշխատողներ
- 2021թ-ին՝ 15 ուսուցիչներ, 8 ուսուցչի օգնականներ, 2 վարչական աշխատողներ
- 2022թ-ին՝12 ուսուցիչներ, 3 ուսուցչի օգնականներ ։
- Դպրոցն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին աջակցող ուսուցչի օգնականներ՝ 8 օգնական /4 դրույք/
- Դպրոցը համագործակցում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցությունների կենտրոնի հետ, աջակցություն է տրամադրվում դպրոցի ԿԱՊԿՈւ աշակերտներին սահմանված ժամանակացույցով, անհրաժեշտության դեպքում իրականացնում են ուսուցիչների և ծնողների խորհրդատվություններ։
- ԿԱՊԿՈւ աշակերտներն ապահովված են գրենական պիտույքներով և դասագրքերով։
- Դպրոցում հաղթահարված են ներառականությունը խաթարող սոցիալական խոչընդոտները։
- Դպրոցում սովորում են ԿԱՊԿՈւ 7 աշակերտներ, որոնք հավասարապես մասնակցում են դասարանի և դպրոցի բոլոր գործընթացներին՝ ըստ իրենց կարողությունների առավելագույն աստիճանի։
- Բոլոր ԿԱՊԿՈւ աշակերտները մասնակցում են արտադասարանական աշխատանքներին։
- Դպրոցի աշակերտները գիտակցում են ԿԱՊԿՈւ իրենց ընկերների նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացման անհրաժեշտությունը և օգնում են փոխել դրանք․

1. աշակերտներին մասնակից են դարձրել համադպրոցական մի շարք միջոցառումների,
2. մասնակից են դարձրել սպորտլանդիային, վազքի մարաթոնին, մարզական խաղերին /5 միջոցառման/
3. մասնակից են դարձրել թանգարաններ, կինոթատրոններ այցելություններին, էքսկուրսիաներին:
4. մասնակից են դարձրել շաբաթօրյակներին:

Դպրոցում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը.

| | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|
| Սեռերի հավասարության գործակիցը | 5.4% | 2.3% | 4.4% |
| Աշ.խորհրդում սեռերի հավ.գործակիցը | 1.9% | 2.1% | 3% |
| Անվճար սնունդ ստացող սովորող. թիվը | 198-38.3% | 208-38.9% | 217-41% |
| Դպրոցում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը | 0 | 0 | 0 |
| Տղաների տարեկան միջին բացակայությունների թվի հարաբ.աղջիկների բաց-ի թվին | 3.5% | 2.9% | 2.7% |
| Սոց. անապահով ընտանիքներից սովորողների համար իրականացրած սոցիալ. աջակց. ծրագրերի թիվը | 3 | 5 | 4 |

Հաստատության կողմից իրականացված ներառական կրթությանն առնչվող արտադասարանական միջոցառումներն ըստ դասարանների՝

1-4-րդ դասարաններում իրականացվել են զրույցներ, տեսաֆիլմերի դիտում- քննարկում

5-8-րդ դասարաններում՝ ֆիլմի դիտում- քննարկում, շարադրություն թեմայի շուրջ

9-12-րդ դասարաններում՝ կլոր սեղաններ, սեմինարներ, պաստառների պատրաստում:

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին տրվել են գրքեր, գրենական պիտույքներ, հիգիենայի պարագաներ, անվճար սնունդ:

Ամուր է դպրոց-շրջանավարտ կապը, ինչը փաստում է, որ մեր սաները սիրում են դպրոցը, սիրով են հաճախում, իրենց զգում են հարգված, ապահով, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական անձնակազմի աշխատանքները, դրա մասին են վկայում նաև ներքին գնահատման շրջանակներում արված հարցումները:

Դպրոցի մանկավարժական համակազմը հատուկ ուշադրություն է դարձնում աշակերտների հաջողություններին դպրոցում և դպրոցից դուրս: Կարևորում է նրանց ձևավորումը՝ որպես քաղաքացիներ, որպես անհատականություններ, ցուցաբերում է անհատական մոտեցում բոլոր ուղղություններում: Դպրոցը պարբերաբար տարբեր ձևաչափերով խրախուսում է շնորհալի, դպրոցասեր և ակտիվ աշակերտներին, նրանց նախասիրությունները:

Դպրոցի սովորողները հաջողությամբ մասնակցում են առարկայական օլիմպիադաների, տարբեր առարկայական մրցույթների («Կենգուրու», «Մեղու»), ստեղծագործական և սպորտային մրցույթների:

## 5.2. Առանց հալածանքի, օտարման և բռնության միջավայր

Դպրոցում չպետք է լինեն աշակերտների նկատմամբ բռնության՝ հոգեբանական, ֆիզիկական ճնշումներ, մարմնական վնասվածքներ հասցնելու դեպքեր: Ծնողները, ինչպես նաև երեխաները, պետք է համոզված լինեն, որ դպրոցում իրենք պաշտպանված են, և տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ: Պետք է մշտապես հոգ տանել աշակերտների առողջության պահպանման համար, վերահսկել բացակայությունները, պահպանել համաճարակային կանոնները, ստեղծել այնպիսի ուսումնական միջավայր, որտեղ ծնողները հաճույքով իրենց երեխաներին կուղարկեն ուսումնառության:

Դպրոցում տեղ չունեն ռասիստական դիտողությունները, ուսումնական հաստատությունները կանոնադրական պարտավորություն ունեն մշտադիտարկել, արձանագրել և քայլեր ձեռնարկել ռասիստական դրսևորումների դեմ: Դպրոցը բարձրացնում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են բոլորի համար կրթության իրավունքը, սոցիալական արդարությունը, սոցիալական ներառումն ու բազմազանությունը և փորձում է մշակել ռազմավարություններ այդ իրականությունների խնդիրները լուծելու համար:

Շատ կարևոր է դպրոցում հոգեբանական անվտանգ միջավայր ունենալը: Այդ միջավայրում չպետք է լինի ֆիզիկական և հոգեբանական բռնության դրսևորումներ: Դպրոցի անվտանգ միջավայրը ունի հումանիստական կողմնորոշվածություն, որտեղ կարևորվում են և՛ ուրիշների, և՛ անձնական հետաքրքրությունները: Դպրոցը՝ ապահովելով անվտանգ միջավայր, նպաստում է սովորողների անձնային զարգացմանը: Մեր դպրոցը մշտապես առաջնորդվել է այն սկզբունքով, որ յուրաքանչյուր սովորող պետք է պաշտպանված լինի, իսկ քիչ պաշտպանված սովորողին պետք է լրացուցիչ աջակցություն ցուցաբերել՝ նպաստելով նրա անհատական զարգացմանը:

Հալածանքի, բռնության և օտարման զոհ կարող է դառնալ ցանկացած երեխա, անկախ նրա մտավոր և ֆիզիկական կարողություններից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալուց, սոցիալական պատկանելիությունից, ուստի դպրոցի մանկավարժական համակազմի և հատկապես տնօրենի մշտական ուշադրության կենտրոնում է նման դեպքերին արագ արձագանքելը և դրանք վերացնելու համար համապատասխան

միջոցառումներ կազմակերպելը: Ընդհանրապես պետք է նշել, որ հիմնական դեպքերում բռնության դրսևորումները դպրոց են գալիս հասարակությունից, այսինքն, օրինակ, կա անհանդուրժողական վերաբերմունք համայնքում որևէ ընտանիքի և հասարակության, կամ ծնողի և մեկ այլ ծնողի, և կամ ուսուցչի հանդեպ, ինչը ուղղակիորեն նպաստում է նրան, որ հոգեբանական և ֆիզիկական հալածանքի զոհն են դառնում այդ ընտանիքների երեխաները: Այս առումով կարևոր է, որ դպրոցի և համայնքի միջև կապերը ամուր են, և դպրոցը մեծ մասամբ նպաստում է նմանատիպ խնդիրների լուծմանը:

Երբեմն դպրոցում պատահում են դեպքեր, երբ աշակերտների միջև լինում է հրմշտոց, հնչում են փոխադարձ վիրավորանքներ, շատ մասնավոր դեպքերում կոնֆլիկտի մաս են կազմում որոշ ուսուցիչներ և ծնողներ: Նման իրավիճակներում տնօրենությունը հանդես է գալիս միջնորդի կարգավիճակում, մասնավորապես, կազմակերպվում են քննարկումներ ուսուցիչների, ծնողների, և, ի վերջո, գտնվում են արդյունավետ քայլեր և լուծումներ կոնֆլիկտի կանխարգելման համար: Նման իրավիճակներից խուսափելու համար հիմնականում դասղեկի տարեկան պլանում, տնօրենի հրահանգմամբ ընդգրկված են բռնության, հալածանքի և օտարման կանխարգելման վերաբերյալ թեմաներ: Այսպիսով՝ դասղեկները երեխաների հետ խոսում են հալածանքի, բռնության, օտարման բացասական լինելու մասին, այդպես փորձում են ձևավորել հարգանք միմյանց նկատմամբ, որպեսզի աշակերտը հասկանա և երբեք չդառնա ագրեսոր: Երեխային անվտանգ պահելու առաջին քայլը թե՛ առօրյա կյանքում, և թե՛ առցանց, համոզվելն է, որ նա գիտի՝ ինչ է բռնությունը:

*Դպրոցի ուսումնական միջավայրի վերլուծությունը*

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Հարմարավետ առօրյա օգտագործման գույքի, լուսավոր և մաքուր դասասենյակների, լոկալ ջեռուցման առկայություն:<br>• Դպրոցը ապահովված է ուսումնաօժանդակ գրականությամբ և դասագրքերով, իսկ միջացնքները հագեցած են ուսուցողական պաստառներով:<br>• Դպրոցը առաջնորդվում է երեխաների իրավունքնենրի պահպանման և ժողովրդավարական դպրոցի ձևավորման սկզբունքներով:<br>• Առկա են ուսուցչի օգնականի հաստիքներ:<br>• Սովորողները սիրով են հաճախում դպրոց, իրենց զգում են ապահով և հարգված, գնահատում են դպրոցի տնօրենության և մանկավարժական անձնակազմի աշխատանքը:<br>• Դպրոցի մանկավարժական համակազմը ցուցաբերում է անհատական մոտեցում | • Դպրոցում բացակայում են և կամ չեն համապատասխանում ուսումնական միջավայրի ֆիզիկական հարմարավետության մի շարք կարևոր օբյեկտներ (լաբարատորիա, հրաձգարան և այլն):<br>• Առարկայական կաբինետների քիչ լինելը:<br>• Դասասենյակները փոքր են և ապահոված չեն ՏՀՏ գործիքակազմով:<br>• Նորարար մոտեցումների թույլ արձագանք ուսուցիչների մեծ մասի կողմից:<br>• Չեն բավարարում խելամիտ հարմարությունները ԿԱՊԿՈւ աշակերտների համար: |

| | |
|---|---|
| յուրաքանչյուր սովորողի մտավոր և ֆիզիկական ունակություններին համապատասխան։<br>• Կազմակերպվում են արագ արձագանքման միջոցառումներ հալածանքի, բռնության և ոտարման դեպքերից զերծ մնալու համար։<br>• Դպրոցում առկա է հոգեբանական և ֆիզիկական անվտանգ միջավայր։ | |

*Հնարավորություններ և առավելություններ*

- Դպրոցի և ծնողական համայնքի ու համայնքի միջև առկա է փոխըմբռնման բարձր մակարդակ։

Տնօրենության և մանկավարժական անձնակազմի ակտիվ ներգրավվածությունը և հետաքրքրվածությունը դպրոցի ապահով, անվտանգ միջավայրի շարունակական բարելավման հարցում։

## 6. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ուսումնական հաստատությունում աշխատում են 50 ուսուցիչներ, աշխատում են նաև 8 ուսուցչի օգնականներ՝ 4 դրույքով:

Մանկավարժներից 46-ն ունեն բարձրագույն կրթություն համապատասխան որակավորմամբ: 5 ուսուցիչ ունի մագիստրոսի աստիճան: Ինֆորմատիկայի ուսուցիչն ունի ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 6 ուսուցիչներ ունեն միջին մասնագիտական կրթություն և ներկայացրել են կամավոր ատեստավորման հայտ: Կամավոր ատեստավորման հայտ են ներկայացրել բարձրագույն կրթություն ունեցող ևս 3 ուսուցիչ:

Ունենք վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող մեկ ուսուցիչ:




| Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը | | |
|---|---|---|
| 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
| 15,8 | 16,6 | 16,4 |
| 45ուս. | 47ուս. | 48ուս |

| | |
|---|---|
| ՈՒսուցիչների միջին տարիքը | 52 |
| ԿԳՄՍՆ կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստված ուսուցիչների թիվ և տոկոս | 39-78% |

| | |
|---|---|
| Որպես ուսուցչի վերապատրաստող վերապատրաստված ուսուցիչների թիվը | 3 |
| Դասավանդման մասնակցային, աշակերտակենտրոն, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը | 18-36% |
| Միջազգային և հանրապետական պարբերականներում հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, մեթոդական ձեռնարկներ, և այլ աշխատանքներ ունեցող ուսուցիչների թիվը | 6-12% |
| Մասնագիտական որակների զարգացմանն ուղղված դասընթացների, սեմինարների մասնակից ուսուցիչների թիվը | 44-88% |
| Փոխադարձ դասալսումների թիվը | 334 |

Մանկավարժական աշխատողների ընտրությունը կազմակերպվում է արդարացի, բարեխիղճ եղանակով․

1․Թափուր տեղերի համալրումն իրականացվում է համաձայն սահմանված ընթացակարգի, պահպանելով թափանցիկությունն ու արդարությունը:

2․Յուրաքանչյուր ուստարվա դասաբաշխումն իրականացվում է թափանցիկ և ընդունելի բոլոր մասնակիցների համար: Քննարկվում է մեթոդմիավորման նիստերում, որից հետո մանկխորհի նիստում:

Քովիդի Համավարակի ժամանակ ուսուցիչները բարելավեցին իրենց տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման կարողություններն ու հմտությունները, պատշաճ իրականացվեց հեռավար կրթությունը:

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարելավմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվում՝

1. Դասալսումներ են իրականացվում դպրոցի տնօրենի, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի և մեթոդմիավորման նախագահների կողմից, արդյունքները քննարկվում են մեթոդմիավորման և մանկխորհի նիստերում: Մանկավարժներին ցուցաբերվում է անհրաժեշտ մեթոդական, մասնագիտական աջակցություն:
2. Ուսուցիչների վերապատրաստումներին յուրաքանչյուր տարի տնօրենի կողմից իրականացվում է մանկավարժների վերապատրաստման ծրագրի մշտադիտարկում, հետադարձ կապի ապահովում:

Տնօրենության կողմից իրականացվում է ուսուցիչների մասնագիտական կարիքի գնահատում և համապատասխան վերապատրաստման կազմակերպում՝

| | Անվանում | Մասնակիցների թիվ |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1. | ՀՀ ԿԳՄՍՆ <<Կրթական ծրագրերի կենտրոն >>ԾԻԳ | 5 |
| 2. | <<Հույսի կամուրջ >> հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանության հասարակական կազմակերպություն | 5 |
| 3. | Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն | 4 |
| 4. | Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից իրականացվող<<Կլիմայի փոփոխության վերաբերյալ իրազեկվածության բարձրացման՝Կլիմայական արկղիկ>>կրթական ծրագիր | 2 |
| 5 | ՀՀ ԿԳՄՍՆ ԿՏԱԿ | 8 |
| 6. | <<Ապագա անգլերենի առցանց ուսուցիչների վերապատրաստում>> | 1 |
| 7. | <<Անտարես >>ընկերություն | 1 |
| 8. | <<Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում>> ՀԿ | 1 |
| 9. | Խ.Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարան | 2 |
| 10. | ՀՀ ԿԳՄՍՆ<<Սևանի Խ.Աբովյանի անվան ավագ դպրոց>>ՊՈԱԿ (հերթական ատեստավորում) | 46 |
| 11. | <<Շրջակա միջավայր և առողջություն>>ՀԿ | 2 |
| 12. | EduArmenia | 9 |
| 13. | <<Նոր ժամանակի կրթություն>> ՀԿ | 2 |
| 14. | ՀՀ ԿԳՄՍՆ ԿԱԻ | 4 |
| 15. | Մոսկվայի պետական համալսարանի ռ.լեզվի կրթական կենտրոն | 1 |
| 16. | ՌԴ հումանիտար համալսարանի կողմից կազմակերպված հեռավար սեմինար նվիրված ռուսաց լեզվի հիմունքներին | 1 |

Ուսումնական հաստատության բոլոր մանկավարժները, առաքինի են, տիրապետում են բարեվարքության կանոններին և մեծ հեղինակություն են վայելում համայնքում: Ուսուցիչները առաջնորդվում են այն գաղափարով, որ հենց դպրոցում են դրվում Հայաստանի Հանրապետության ապագա կարողունակ քաղաքացու ձևավորման ուղենիշերի՝ արժեքային համակարգի և աշխարահայացքի ձևավորման հիմքերը, ուստի կարևորվում է սովորողների որակյալ և անխափան կրթություն ստանալու իրավունքը՝ իր կարողունակությանը համապատասխան: Մանկավարժները հետևում են, որ պահպանվի բարենպաստ կրթական միջավայրը բոլոր աշակերտների համար ՝ առանց խտրականության:

Մանկավարժները ազատ են դասապրոցեսը կազմակերպելու համար իրենց նորարական մոտեցումների կիրառման հարցում, ինչպես նաև պետական կառավարման լիազոր մարմնի երաշխավորած դասագրքերից և ձեռնարկներից, ուսուցողական նյութերից ընտրում են իրենց բնութագրմամբ ուսման գործընթացը առավել մատչելի դարձնողները:

Նրանք հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան մշակում են իրենց թեմատիկ ծրագրերն ու դասապլանները և դասապրոցեսը կազմակերպում ըստ այդմ: Նշեմ, որ մանկավարժները մասնագիտական գործունեության իրականացման համար հիմնականում ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական և կազմակերպական պայմաններով:

Ինչպես նշվեց դպրոցում հաճախ են կազմակերպվում դասալսումներ, բաց դասեր, դաս-միջոցառումներ, տեսադասեր, որոնք միտված են ուսման որակը բարձրացնելուն: Դասալսումներ կատարվում են բոլոր առարկաներից: Դասալսումները քննարկվում են մեթոդական միավորումների նիստերի ժամանակ՝ դիտարկումները, եզրակացությունները առաջարկությունների նկատմամբ ուսումնասիրությունները լինում են հետևողական և տարվում է աշխատանք՝ հաջորդ դասերին դրանք շտկելու ուղղությամբ: Կազմակերպվում են տեսադասեր, տեսաֆիլմերի դիտում․ դասաժամերին կիրառվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, որոնք նպաստում են թեմայի ընկալմանը, հեշտացնում թեմայի ուսուցումը:

Յուրաքանչյուր ուստարվա ավարտին լավագույն բաց դասերի, նախագծային աշխատանքների իրականացման, համադպրոցական միջոցառումների կազմակերպման համար մի շարք ուսուցիչներ տնօրենության կողմից խրախուսական մրցանակների են արժանացել:

Հաստատության մանկավարժներից 4-ը լավ չեն տիրապետում դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին, 7-ը լավ չեն տիրապետում ՏՀՏ-ին: Տնօրենության կողմից նախատեսվել են վերապատրաստման դասընթացներ հիշյալ ուսուցիչների համար:

***Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները***

Ուսումնական հաստատության տնօրենությունը մշտապես փորձում է ակտիվ պահել դպրոցի աշխատակազմին՝ պարբերաբար իրականցնելով մի շարք խրախուսման և անձի արժևորման միջոցառումներ: Նմանատիպ միջոցառումները հիմնականում բարոյահոգեբանական բնույթի են, քանի որ դպրոցը բավարար միջոցներ չունի ֆինանսական և նյութական խրախուսման միջոցառումներ կազմակերպելու համար: Ուշադրության կենտրոնում են հատկապես երկար տարիների փորձ ունեցող աշխատակիցները, քանի որ ժամանակի ընթացքում նկատվում է նրանց պրոդուկտիվության նվազում: Տնօրենության հովանավորությամբ ձևավորվել է արդեն ավանդույթի նմանվող միջոցառումների համակարգ: Մասնավորապես հանդիսավոր կերպով կազմակերպվում և նշվում են անձնակազմից յուրաքանչյուրի ծննդյան օրը, դպրոցից թոշակառու աշխատակիցների հեռանալու դեպքում կազմակերպվում են շնորհակալական միջոցառումներ: Տնօրենը բոլոր աշխատողների ներկայությամբ գովասանքի խոսքեր է հնչեցնում իր գործում իրեն լավ դրսևորած և հաջողություններ գրանցած աշխատակցին, իսկ իր գործում թերացող աշխատակցի հետ խոսում է առանձին՝ ներկայացնում իր հասցեին ուղղված բողոքները, սիրալիր կերպով առաջարկում անհրաժեշտության դեպքում փոխելու իր աշխատաոճը, անհրաժեշտ վերապատրաստում անցնելու, առաջավոր փորձը ուսումնասիրելու

անհրաժեշտության մասին: Նորեկ աշխատակիցների համար կազմակերպվում են ողջույնի միջոցառումներ, որպեսզի նոր աշխատակիցները ավելի շուտ ինտեգրվեն նոր միջավայրին, արագ ծանոթանան կազմակերպության մշակութային միջավայրին և հնարավորինս արագ իրենց համարեն այդ միջավայրի մի մասնիկը:

Իհարկե, պետք է նշել, որ երբեմն խրախուսման և արժևորման բարոյահոգեբանական միջոցառումները կարող են չտալ այնքան լավ արդյունք, որքան կտային նյութական խրախուսման միջոցառումները: Որոշ ուսուցիչների համար բարոյահոգեբանական խրախուսման միջոցառումները չեն տալիս ոչ մի արդյունք, նրանք շարունակում են աշխատել նույն ոճով, անկախ ժամանակի պահանջներից, ուշ են արձագանքում նորարարություններին, չեն փորձում բարելավել իրենց գիտելիքները ՏՀՏ գործիքակազմի կիրառման հարցում, հետևաբար նման ուսուցիչների աշխատանքը խթանելու միակ տարբերակը նկատողություններ սահմանելն է, որի դեպքում նրանք դառնում են ավելի զգայուն, եթե քննարկումներն ու զրույցներն արդյունք չեն տալիս:

***Դպրոցի ուսումնական միջավայրի վերլուծությունը***

| ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ | ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ |
|---|---|
| • Դպրոցն օրենքների և պետական կրթական քաղաքականության համապատասխան համալրում է իր անձնակազմը նոր, որակյալ ուսուցիչներով:<br>• Մանկավարժական անձնակազմը համալրված է բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչներով:<br>• Դպրոցի աշխատակազմը համերաշխ է, տիրում է բարոյահոգբանական առողջ միջավայր, գործում են ձևավորված լավ ավանդույթներ:<br>• Մանկավարժները օգտվում են պետական կառավարման լիազոր մարմնի երաշխավորած դասագրքերից և ձեռնարկներից, ուսուցողական նյութերից:<br>• Մանկավարժները հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան մշակում են իրենց թեմատիկ ծրագրերը և դասապլանները:<br>• Մասնագիտական գործունեության իրականացման համար մանկավարժները հիմնականում ապահովված են անհրաժեշտ նյութատեխնիկական և կազմակերպական պայմաններով:<br>• Տնօրենության կողմից ներդրվել է անձի խրախուսման և արժևորման | • Չկան տարակարգ ունեցող մանկավարժներ:<br>• Ընդամենը մեկ գիտական կոչում ունեցող ուսուցիչ:<br>• Որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ընդամենը մեկ ուսուցիչ:<br>• Դպրոցում չկա էթիկայի հանձնաժողով, որը կզբաղվեր ուսուցիչների բարեվարքության պահպանման հսկողությամբ:<br>• Փոփոխություններին դեմ և ինքնակրթությամբ, նոր մոտեցումներով դասավանդելու ու վերապատրաստումներին դեմ արտահայտվող մանկավարժների առկայություն:<br>• Ցածր արդյունավետություն ապահովող մանկավարժների առկայություն:<br>• Խրախուսման ֆինանսական և նյութական համակարգի բացակայություն |

| | |
|---|---|
| միջոցառումների բարոյահոգեբանական համակարգ: | |

*Հնարավորություններ և առավելություններ*

- Ինքնակրթությամբ, առաջավոր փորձի փոխանակման միջոցով իրենց մասնագիտական հմտությունները բարելավելմամբ հետաքրքրված մասնագետների առկայություն:
- Կրթության պետական քաղաքականության շարունակական բարելավման միջոցառումներ:
- Տնօրենության շահագրգռվածությունը աշխատակազմի արժևորման և խրախուսման միջոցառումներ կազմակերպելու հարցում:

## 7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ

Կրթության որակ ասելով՝ հասկանում ենք սովորողի կրթական պատրաստվածության և հմտությունների ամբողջական բնութագիրը, որոնք պետք է համապատասխանեն աշակերտի կրթական կարիքներին և պետական ու առարկայական չափորոշիչներին: Կրթության որակի բարձրացման համար անհրաժեշտ է գնահատել կրթության որակի փաստացի վիճակը, որի համար կարևորում եմ բազմաթիվ դասալսումները, վիճակագրական վերլուծությունները, տարեսկզբի ու տարեվերջի ներքին ստուգումները և արդյունքների համադրումը:

Կրթության որակը ապահովող հաջորդ քայլը աշխատանքների թիրախավորված և ճիշտ պլանավորումն է, առարկայական ծրագրերի վերանայումը, վերամշակումը, որտեղ ավելի հանգամանորեն են արտահայտվում դասի նպատակն ու ակնկալվող արդյունքները: Որոշ դեպքերում չունենալով համապատասխան տեխնիկական հնարավորություններ և բազա ՝ անհրաժեշտություն է առաջանում մշակել տարբեր ծրագրեր: Ուսման բարձր որակ ապահովելու կարևոր գրավականներից մեկը հանձնարարությունների և կազմակերպչական գործողությունների կատարումն է, մանկավարժների կողմից աշխատանքների կազմակերպման հատուկ մեխանիզմների առկայությունը, ինչպես նաև դրանց արդյունքերի մշտադիտարկման վերլուծությունը, որոնց միջոցով վեր են հանվում շեղումները և թերությունները, ինչը հնարավորություն է տալիս գտնելու սխալներն ու դրանց հետևանքները, մշակելու նոր ուղղման գործընթաց: Նաև պետք է մեծ ուշադրություն դարձնել տարբեր առարկաների փոխկապակցված լինելուն, որպեսզի ձեռքբերված գիտելիքներն ինքնանպատակ չլինեն, այլ վերածվեն կարողության և հմտության: Այսպիսով՝ ուսումնական հաստատությունը կազմակերպում է ուսուցման գործընթացը պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան և աշխատում կրթության որակը համապատատասխանեցնել չափորոշչային պահանջներին: Մանկավարժներն արդեն անցել են վերապատրաստման դասընթացներ նոր պետական չափորոշիչները (ՀՊՉ) յուրացնելու համար, որը կրթության որակի բարելավման համար կարևոր քայլերից էր: Մանկավարժական համակազմին հստակ հանձնարարված է, նաև, կատարել աշխատանքներ ԿԱՊԿՈւ աշակերտներին բացահայտելու և նրանց հետ առանձին աշխատանքներ տանելու համար:

Դպրոցում կրթության բովանդակությունը, որը սահմանված առարկայական ծրագրերով, կրթության չափորոշիչներով, ուսումնական պլաններով, արտացոլված ուսումնամեթոդական նյութերով և ուղղված է սովորողների մոտ ֆունդամենտալ գիտելիքների, կենսական հմտությունների և արժեքների ձևավորմանը՝ ներառյալ առողջության պահպանմանն ուղղված հմտություններն ու գիտելիքները զարգացնելուն:

Դպրոցի բոլոր դասարաններում սովորում են 555 աշակերտներ՝ աղջիկներ 257, տղաներ 298:

| Սովորողների թիվը ուստարվա սկզբին | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 |
|---|---|---|---|---|
| 1-ին | 53 | 43 | 70 | 62 |
| 2-րդ | 45 | 53 | 43 | 65 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3-րդ | 41 | 45 | 52 | 40 |
| 4-րդ | 56 | 42 | 45 | 51 |
| 5-րդ | 46 | 55 | 39 | 45 |
| 6-րդ | 51 | 46 | 53 | 37 |
| 7-րդ | 34 | 50 | 46 | 51 |
| 8-րդ | 54 | 34 | 50 | 45 |
| 9-րդ | 42 | 54 | 34 | 46 |
| 10-րդ | 42 | 27 | 38 | 27 |
| 11-րդ | 31 | 39 | 25 | 37 |
| 12-րդ | 37 | 29 | 39 | 24 |
| ընդ. | 532 | 517 | 534 | 530 |

Աշակերտների թիվը տարրական և հիմնական դպրոցում պակասում կամ ավելանում է ընտանիքների բնակավայրից բնակավայր տեղափոխվելու պատճառով: Իսկ ավագ դպրոցում աշակերտների թիվը հիմնականում պակասում է նախնական մասնագիտական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ տեղափոխվելու պատճառով:

| **Ցուցանիշ** | **2020-2021** | **2021-2022** | **2022-2023** |
|---|---|---|---|
| Աշակերտների թիվը ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերի 1-ի դրությամբ | 517 | 534 | 530 |
| Աշակերտների ընդհանուր թիվը ուստարվա վերջին՝ տվյալ ուստարվա մարտի 25-ի դրությամբ | 506 | 520 | 527 |
| Ուստարվա ընթացքում ընդունված աշակերտների թիվ | 2 | 2 | 6 |
| Ուստարվա ընթացքում հեռացած աշակերտների թիվ | 13 | 16 | 9 |

Հայոց եկեղեցու պատմության հանրապետական օլիմպիադային մասնակցել է 1 աշակերտ, գրավել է երրորդ տեղ և արժանացել խրախուսական մրցանակի:

Հայոց եկեղեցու պատմությունից «Աստվածաշնչի գիտելիքի վիկտորինա» մրցույթի նախապատրաստական և վերջնական փուլերին դպրոցի թիմը գրավել է առաջին տեղեր:

Կրթության որակի բարելավման համար տարվում են հետևյալ աշխատանքները․

- պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան կազմվում են թեմատիկ պլաններ,
- մեթոդական միավորումները վերահսկում են դասավանդման որակը, պլանների կատարումը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը, տնային հանձնարարությունների ծավալը

- մնացորդային գիտելիքը ստուգելու համար տրվում են հայտորոշիչ գրավոր աշխատանքներ
- սովորողների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մ/մ նիստերում, քննարկվում է առաջադիմությունը, որակը
- պարբերաբար կատարվում են առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ, մշտադիտարկումներ
- ապահովվում է մանկավարժների շարունակական մասնագիտական աճը
- անհրաժեշտության դեպքում անցկացվում են ծնողական ժողովներ, դասարանական խորհրդակցություններ, քննարկվում առաջացած խնդիրները, գտնում լուծման ճանապարհները:

| Ցուցանիշ | 2020-2021 | | | 2021-2022 | | | 2022-2023 | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 1-4 | 5-9 | 10-12 | 1-4 | 5-9 | 10-12 | 1-4 | 5-9 | 10-12 |
| Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և % | 75աշ. 41% | 51աշ. 21% | 10աշ. 11% | 72աշ. 34% | 33աշ. 15 % | 9աշ. 9 % | 85աշ. 39% | 53աշ. 24% | 12աշ. 14 % |
| Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և % ըստ կրթական աստիճանների | 33աշ. 18% | 102աշ. 42% | 68աշ. 71% | 55աշ. 17% | 112աշ. 50% | 73աշ. 71% | 47աշ. 21% | 117աշ. 52% | 64աշ. 72% |
| երկտարեցիների թիվը և % ըստ կրթական աստիճանների | - | - | - | - | - | - | - | - | 2աշ. 2% |
| Միասնական քննություններին մասնակիցների թիվը և % շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ | | | 9 աշ. 31% | | | 18աշ. 46% | | | 10աշ. 42% |
| Ավարտական և միասնական քննություններից անբավարար ստացած շրջանավարտների թիվը, % | - | - | - | - | - | 1աշ. 5% | - | - | - |
| Բուհեր ընդունված | | | 9աշ. | | | 19աշ. | | | 12աշ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| շրջանավարտների թիվ,% | | | 31% | | | 49% | | | 50% |
| ՈՒսումնական տարվա ընթացքում այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվ և % | 4աշ.<br>2% | 6աշ.<br>2,5% | 3աշ.<br>3% | 9աշ.<br>4% | 5աշ.<br>2% | 2աշ.<br>2% | 3աշ.<br>1% | 4աշ.<br>2% | 2աշ.<br>2% |
| Բացակայությունների թիվը | 334 | 1225 | 1350 | 2567 | 6085 | 5357 | 4027 | 8648 | 5702 |




Հիմնականում գերազանցիկների և հարվածայինների թիվը բարձր է լինում տարրական դասարաններում:

Հիմնական և ավագ դպրոցներում գերազանցիկների և հրավածայինների թիվը պակասում է տարբեր պատճառներով՝

ա/ սովորողի սովորելու ձգտման բացակայություն

բ/ որոշ ծնողների անտարբեր վերաբերմունք

գ/ ծնողների զբաղվածություն

2020, 2021 թվականներին աշակերտների բացակայությունները հիմնականում կապված էին հիվանդությունների և վիրուսների աճի հետ:

Երկտարեցիներ եղել են 2022-2023 ուստարում բացակայությունների հիմքով, որի հիմնական պատճառը ծնողների անբարեխիղճ վերաբերմունք է եղել: Դպրոցի կողմից իրականացվել են տարբեր միջոցառումներ՝ կասեցնելու բացակայության աճը՝ շատ բացակայող աշակերտների ծնողների հետ հանդիպումներ, այցեր տուն, բացատրական աշխատանքներ, զրույցներ:

***Մարզային և հանրապետական, առարկայական օլիմպիադաների մասնակիցներ.***

| | ԱՌԱՐԿԱ | 2019-2020 ուստարի | Փուլեր | Դասարան | 2020-2021 ուստարի | Փուլեր | Դասարան | 2021-2022 ուստարի | Փուլեր | Դասարան | 2022-2023 ուստարի | Փուլեր | Դասարան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայոց պատմություն | Աբրահամյան Շահանե | մ/փ | 9 | Նուբարյան Անի | մ/փ | 12 | | | | | | |
| | | Վարդանյան Սոֆի | մ/փ | 9 | | | | | | | | | |
| | | Գուլանյան Անահիտ | մ/փ | 10 | | | | | | | | | |
| | | Եսայան Աննա | մ/փ | 11 | | | | | | | | | |
| | | Ղազարյան Ռուզան | մ/փ | 11 | | | | | | | | | |
| | | Նուբարյան Անի | մ/փ | 11 | | | | | | | | | |
| 2. | ՀԵՊ | Նուբարյան Անի | հ/փ | 11 | | | | | | | | | |
| 3. | Կենսաբանություն | Աբրահամյան Շահանե | մ/փ | 9 | Շխոյան Արմինե | մ/փ | 12 | | դ/փ դ/փ | 10 10 | Գուլանյան Սյուզան | մ/փ | 9 |
| | | | | | Մարգարյան Վարդուհի | մ/փ | 12 | | | | | | |
| 4. | Աշխարհագրություն | Մարգարյան Վարդուհի | մ/փ | 11 | Ղազարյան Հովիկ | մ/փ | 9 | Խաչատրյան Աշխեն | մ/փ, | 9 | Խաչատրյան Աշխեն | հ/փ | 10 |
| | | Շխոյան Արմինե | մ/փ | 11 | Անտոնյան Տիգրան | մ/փ | 9 | Հայրապետյան Մարի | մ/փ, | 9 | | | |
| | | Պետրոսյան Լիլիթ | մ/փ | 11 | Գասպարյան Ամալյա | մ/փ | 11 | | | 9 | | | |
| | | Հայրապետյան Եվա | մ/փ | 12 | Մկրտչյան Նինա | մ/փ | 11 | | | 9 | | | |
| | | | | | Պողոսյան Անի | մ/փ, հ/փ | 11 | Մելոյան Արևիկ Գուլանյան Աննա Վարդանյան Սոֆի | մ/փ մ/փ մ/փ | 9 10 11 | | | |
| 5 | Ռուսաց լեզու | Մկրտչյան Նինա | մ/փ | 10 | Նուբարյան Անի | մ/փ | 12 | | | | | | |

Աշակերտների մասնակցության աճին մարզական և մշակույթային խմբակներին շատ ժամանակ խանգարում է ծնողների ֆինանսների սղությունը։

Ավագ դասարանների աշակերտները առարկայական օլիմպիադաներին խուսափում են ակտիվ մասնակցություն ունենալ։ Հիմնականում աղջիկներն են մասնակցում։

2021-2021 ուսումնական տարում մեկ աշակերտ ոսկե մեդալակիր է դարձել և ստացել է դրամական պարգև, պարգևատրվել է մարզպետի և դպրոցի տնօրենի կողմից պատվոգրերով, հուշանվերներով։

10-րդ, 11-րդ դասարանի աշակերտները ուսումնասիրում են «Տնտեսագիտություն» առարկան, ունեն «Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավունք» փաստաթուղթ, և յուրաքանչյուր ուստարվա ընթացքում իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն, որի արդյունքում ստացված եկամուտը ծառայեցնում են բարեգործության։

2019 թ-ից սկսած աշակերտները դպրոցական բաղադրիչի հաշվին 5-րդ դասարանից ուսումնասիրում են երրորդ օտար լեզու՝ անգլերեն։

***<u>Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ 2021-2022 ուստարում</u>***

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Մայրենի | 45 | | | 8.3 | | | 6.8 | | |
| Հայոց լեզու | | 32 | 39 | | 7.4 | | | 8.6 | 6.5 |
| Գրականություն | | 32 | 39 | | 7.6 | | | 8 | |
| Հայ գրականություն | | 32 | 39 | | | 7.8 | | | |
| Ռուսաց լեզու | 45 | 32 | 39 | | 7.4 | 7.8 | | 6.5 | |
| Օտար լեզու | 45 | 32 | 39 | | 6.9 | 7.5 | | | |
| Մաթեմատիկա | 45 | 32 | | 8 | | | 6.5 | 8.4 | 6.8 |
| Երաժշտություն | 45 | | | 8.7 | | | | | |
| Կերպարվեստ | 45 | | | 8.8 | | | | | |
| Ես և շրջակա աշխարհը | 45 | | | 8.4 | | | | | |
| Հայրենագիտություն | | | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Բնագիտություն | | | | | | | | | |
| Աշխարհագրություն | | 32 | 39 | | | 7.7 | | 7.2 | |
| Հայաստանի աշխարհագրություն | | 32 | | | 7.8 | | | | |
| Հայոց պատմություն | | 32 | 39 | | 7.9 | 8.1 | | 7.2 | 6.9 |
| Համաշխարհային պատմություն | | 32 | 39 | | 7.8 | 8.1 | | | |
| Հայոց եկեղեցու պատմություն | | 32 | | | 7.6 | 9.6 | | | |
| Հասարակագիտություն | | 32 | 39 | | 7.6 | 8.4 | | | |
| Հանրահաշիվ | | 32 | | | 6.3 | 7.1 | | | |
| Երկրաչափություն | | 32 | | | 6.2 | 7.2 | | | |
| Ինֆորմատիկա | | 32 | 39 | | 7.7 | 7.6 | | | |
| Ֆիզիկա | | 32 | 39 | | 6.5 | 7.1 | | 6.1 | |
| Քիմիա | | 32 | 39 | | 7.4 | 8 | | 6.7 | |
| Կենսաբանություն | | 32 | 39 | | 7 | 8 | | 7 | |
| Տեխնոլոգիա | 45 | | | 8.5 | | | | | |
| ՆԶՊ և անվտանգ գործունեություն | | 32 | 39 | | 9 | 9 | | | |
| Ֆիզկուլտուրա | 45 | 32 | 39 | | 9 | 9 | | 8.2 | Ստ. |
| Ձեռնարկատիրություն | | | | | | 8.3 | | | |
| Շախմատ | 45 | | | 8.4 | | | | | |
| Ձեռնարկատիրական կրթություն | | | | | | 8.3 | | | |
| Ընդամենը | 45 | 32 | 39 | | | | | | |

***<u>2022-2023 ուսումնական տարի</u>***

| Հիմնական առարկաներ | Սովորողների թիվը | | | Հիմնական առարկաներից տարեկան գնահատականների միջինը | | | 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների միավորների միջինը | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս | 12-րդ. դաս. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մայրենի | 51 | | | 8.4 | | | 8.9 | | |
| Հայոց լեզու | | 46 | 24 | | 7 | | | 6 | 5.4 |
| Գրականություն | | 46 | | | 6.7 | | | 7.5 | |
| Հայ գրականություն | | | 24 | | | 7.6 | | | |
| Ռուսաց լեզու | 51 | 46 | 24 | 8.4 | 6.8 | 7.4 | | 7.6 | |
| Օտար լեզու | 51 | 46 | 24 | 8.2 | 6.6 | 6.4 | | 7.5 | |
| Մաթեմատիկա | 51 | | | 8.4 | | | 9.1 | 5.5 | 6.1 |
| Երաժշտություն | 51 | | | 8.6 | | | | | |
| Կերպարվեստ | 51 | | | 9.1 | | | | | |
| Ես և շրջակա աշխարհը | 51 | | | 8.8 | | | | | |
| Հայրենագիտություն | | | | | | | | | |
| Բնագիտություն | | | | | | | | | |
| Աշխարհագրություն | | | 24 | | | 7.6 | | 8.4 | |
| Հայաստանի աշխարհագրություն | | 46 | | | 7.8 | | | | |
| Հայոց պատմություն | | 46 | 24 | | 7 | | | 7.4 | 6.4 |
| Համաշխարհային պատմություն | | 46 | 24 | | 6.2 | 6.6 | | | |
| Հայոց եկեղեցու պատմություն | | 46 | | | 6.8 | | | | |
| Հասարակագիտություն | | 46 | 24 | | 7 | 7.7 | | | |
| Հանրահաշիվ | | 46 | 24 | | 6.3 | 6.1 | | | |
| Երկրաչափություն | | 46 | 24 | | 6 | 6 | | | |
| Ինֆորմատիկա | | 46 | 24 | | 7 | 7.2 | | | |
| Ֆիզիկա | | 46 | 24 | | 6.5 | 6.3 | | 7.5 | |
| Քիմիա | | 46 | 24 | | 6.7 | 7.1 | | 8.3 | |
| Կենսաբանություն | | 46 | 24 | | 7 | 7.7 | | 6.1 | |
| Տեխնոլոգիա | 51 | | | 9 | | | | | |
| ՆԶՊ և անվտանգ գործունեություն | | 46 | 24 | | 8.6 | 8.7 | | | |
| Ֆիզկուլտուրա | 51 | 46 | 24 | 8.9 | 8.5 | 8.5 | | 8.4 | Ստ. |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Շախմատ | 51 | | | 9.2 | | | | | |
| Ձեռնարկատիրական կրթություն | | | | | | 8.5 | | | |
| Ընդամենը | 51 | 46 | 24 | | | | | | |

***Տվյալներ 4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ, 12-րդ դասարաններում պետական ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ.***

| Քննական առարկաներ | Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Քննությունների միջին միավորների աճի տոկոսը | | | Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը | | |
| | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. | 4-րդ. դաս. | 9-րդ. դաս. | 12-րդ. դաս. |
| Մայրենի | 24% | | | | | |
| Հայոց լեզու | | | | | 30% | 16% |
| Գրականություն | | | | | 6% | |
| Հայ գրականություն | | | | | | |
| Ռուսաց լեզու | | 14% | | | | |
| Օտար լեզու | | | | | | |
| Մաթեմատիկա | 29% | | | | 34% | 10% |
| Երաժշտություն | | | | | | |
| Կերպարվեստ | | | | | | |
| Ես և շրջակա աշխարհը | | | | | | |
| Հայրենագիտություն | | | | | | |
| Բնագիտություն | | | | | | |
| Աշխարհագրություն | | 14% | | | | |
| Հայաստանի | | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| աշխարհագրությու ն | | | | | | |
| Հայոց պատմություն | | 2.7% | | | | 7% |
| Համաշխարհային պատմություն | | | | | | |
| Հայոց եկեղեցու պատմություն | | | | | | |
| Հասարակագիտու թյուն | | | | | | |
| Հանրահաշիվ | | | | | | |
| Երկրաչափություն | | | | | | |
| Ինֆորմատիկա | | | | | | |
| Ֆիզիկա | | 18% | | | | |
| Քիմիա | | 19% | | | | |
| Կենսաբանություն | | | | | 12% | |
| Տեխնոլոգիա | | | | | | |
| ՆԶՊ և անվտանգ գործունեություն | | | | | | |
| Ֆիզկուլտուրա | | 2% | | | | |
| Շախմատ | | | | | | |
| Դպրոցական բաղադրիչ | | | | | | |
| Ընդամենը | | | | | | |

2022-2023 ուստարվա ընթացքում դպրոցում տարածվել էր կարմրուկի համաճարակը, որի պատճառով ավելացել էր բացակայությունների թիվը, որն իր բացասական ազդեցությունը թողեց քննական արդյունքների վրա։

# 8. ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

21-րդ դարում դասապրոցեսում կարևորվում է ՏՀՏ տեխնոլոգիաների ներդրումը։ Ուսուցիչները, հմուտ, փորձառու, ստեղծագործ, ժամանակի մարտահրավերներն ընդունող և դժվարություններից չերկնչող մանկավարժներ են։ ԿՏԱԿ–ի էլեկտրոնային պաշարների շտեմարանում ուսուցիչներից շատերն ունեն մասնագիտական – հետազոտական հրաշալի աշխատանքներ։ Նրանց մեծ մասը ժամանակ առ ժամանակ մասնակցում է առկա և հեռավար վերապատրաստումների տարբեր դասընթացների, տիրապետում են ՏՀՏ գործիքների, ուսումնական տարվա ընթացում կիրառում են ***Google forms, (LearningApps, Office Sway, Quizizz Socrative, Kahoot*** գնահատման գործիքները, սովորեցնում են պատրաստել սահիկաշարեր, կիրառում են դասավանդման արդյունավետ մեթոդներ։

Դպրոցում ՏՀՏ-ների օգտագործումը ներառում է կրթական ծրագրերի իրականացման բոլոր ուղղությունները՝ վարչատնտեսական գործունեություն, կառավարում, ուսումնադաստիարակչական աշխատանքներ։

*__Վարչատնտեսական__*

Էլեկտրոնային եղանակով իրականացվում են.

1. գնումների գործընթացը
2. հաշվապահական հաշվառման գործընթացը
3. աշխատողների աշխատավարձերի վճարումները
4. հաստատության բոլոր դասագրքերի հաշվառումը ԴՇՀ-ի էլեկտրոնային շտեմարանում
5. գույքագրումն ու գույքի հաշվառումը։

*__Կառավարում__*

Դպրոցի վարչական աշխատողները տիրապետում են ՏՀՏ-ներին և այն կիրառում կառավարման գործընթացում․

1. ուսումնական տարվա մեկնարկին դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, ԴԱԿ-ի, տնօրենի տեղակալի, գրադարանավարի, ուսուցչի օգնականների աշխատանքային հաշվետվությունները ներմուծվում են պաշարների շտեմարան,
2. տնօրենի կողմից, ինչպես նաև տնօրենի ուսումնական գծով տեղակալի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառվում են emis համակարգում իրականացնելու մշտադիտարկումներ սովորողների առաջադիմության, հաճախումների, ուսուցիչների կողմից էլեկտրոնային մատյանի ժամանակին և պատշաճ վարման վերաբերյալ։

Տնօրենի կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվում է

ա․ աշակերտների ընդունումն ու ազատումը

բ․աշխատողների ընդունումը և ազատումը

գ․շրջանավարտների հիմնական կրթության վկայականների, ինչպես նաև միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատների ձևավորումը և հաշվառումը

դ․դասացուցակի, տարիֆիկացիայի ձևավորումը

ե․հաստատության փաստատղթաշրջանառությունը լիազոր մարմնի, կրթության կառավարման պետական լիազոր մարմնի և այլ կազմակերպությունների հետ։

***<u>Ուսումնադաստիարակչական</u>***

Դպրոցում ուսումնական պլանով սահմանված բոլոր առարկաների համար գործում է դասաժամերը տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ վարելու համար դասացուցակ։ Ուսուցիչները ՏՀՏ-ները ուսումնական գործընթացում կիրառում են՝

1. վարում են էլեկտրոնային դասամատյանները
2. դասաժամերի ընթացքում կիրառում են տեսանյութեր, տեսաասահիկներ դասերի արդյունավետ ներկայացման, ամփոփման համար
3. օգտագործում են գիտելիքների ստուգման տարբեր գործիքակազմ
4. անհրաժեշտության դեպքում իրականացնում են հեռավար դասեր
5. ըստ անհրաժեշտության հեռավար ծնողական ժողովներ են կազմակերպում։

Հաստատությունն ուսումնադաստիարակչական աշխատանքն առավել արդյունավետ դարձնելու նպատակով մշտապես օգտվում է ներքոհիշյալ կայքերից՝

1. Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ) պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ https://www.ktak.am/
2. «ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ՝ https://kznakhimnadram.blogspot.com
3. «Հայկական կրթական միջավայր» պորտալ՝ http://www.armedu.am/
4. «Պաշարների շտեմարան»՝ http://lib.armedu.am/
5. <u>«Հեռավար ուսուցում» համակարգ</u>՝ http://learning.armedu.am/

«Ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ»՝ http://esource.armedu.am/

## 9. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

| Կառավարում | |
|---|---|
| **Դրական ազդեցություն** | **Բացասական ազդեցություն** |
| Ինքնավստահության աճ, հաստատությանը տրված աշխատանքների ավելացում, դպրոցի գործունեությանը միջամտության նվազում | Ավելորդ բյուրոկրատական խոչընդոտներ |
| **Հասարակություն** | |
| **Դրական ազդեցություն** | **Բացասական ազդեցություն** |
| Դպրոցին աջակցելու, օգնելու պատրաստակամություն, կրթական համակարգի բարեփոխումներին նկատմամբ դրական վերաբերմունք, Ծնելիության աճ վստահություն | Արտագաղթ, համայնքի սոցիալական-մշակութային զարգացման ցածր մակարդակ |
| **Տնտեսություն** | |
| **Դրական ազդեցություն** | **Բացասական ազդեցություն** |
| Տարածքում տնտեսության որևէ այլ ճյուղի զարգացում<br>Գյուղատնտեսության զարգացում | Հաստատությունում ֆինանսական ներդրումների բացակայություն, Ֆինանսական ճգնաժամ |
| **Քաղաքականություն** | |
| **Դրական ազդեցություն** | **Բացասական ազդեցություն** |
| Կրթության զարգացման պետական ծրագիր<br>Նոր փոփոխություններ օրենքներում<br>Նոր չափորոշիչներ<br>Նոր ծրագրեր, դասագրքեր | Օպտիմալացման քաղաքականություն |

## 10. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՋԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔ

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Երիտասարդ մանկավարժների թիմ, Ստեղծագործ կոլեկտիվ Մեթոդական, մանկավարժական վարպետության շաբաթների, ամիսների գործող համակարգ, Տարբեր որակավորման աստիճաններ ունեցող /բակալավր, մագիստրոս, ասպիրանտ/ մանկավարժների թիմ, ակտիվ մասնակցություն մանկավարժական վերապատրաստումների ն, վերապատրաստող մանկավարժների առկայություն: մեթոդմիավորումների համակարգված և արդյունավետ աշխատանք: | Մանկավարժների մի մասը պատրաստ չէ համապատասխան ձևով ընդունել և արձագանքել ծրագրային նոր պահանջներին, շահագրգռվածության պակաս կամավոր ատեստավորման, տարակարգի ձեռքբերմանը, մանկավարժների մի մասը ՏՀՏ տեխնոլոգիաները արդյունավետ չի կիրառում դասերին. դժվարությամբ և դժկամությամբ են արձագանքում նորարարությունների ն: | 1. Ներդպրոցական մանկավարժամեթո դական խորհրդատվկան համակարգի ստեղծում<br>2. կադրային նոր քաղաքականություն<br>3. հաստատության վարկանիշի բարձրացում, այդ աշխատանքում մարքեթինգի տարրերի ներմուծում<br>4. մանկավարժների մոտիվացիայի բարձրացում խրախուսման համակարգի միջոցով<br>5. պարտականություն ների վերաբաշխում | 1. արտաքին միջոցների ներգրավման ցածր մակարդակ<br>2. պահպանողական մոտեցումների դեմ աշխատանքում կոնֆլիկտների և դիմադրության առաջացում |

*Համագործակցություն*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Դպրոցի տնօրենությունը մշտապես աջակցում է աշակերտների նախաձեռնություններին , փոխադարձ հարգանքի վրա են հիմնված սովորող-ուսուցիչ և | Ծնողների որոշ մասի անտարբերությունը դպրոցի իրադարձությունների ն:<br>Ավագ դասարաններում | Ծնողների համար կազմակերպել քննարկումներ, սեմինարներ:<br>Դիմել համայնքի ղեկավարին ավագանու նիստերին | Ծնողների ծանրաբեռնվածությո ւնը աշխատանքով:<br>Համայնքի ղեկավարի ծանրաբեռնվածությո ւնը |

| | | | |
|---|---|---|---|
| սովորող-սովորող հարաբերությունները: Դպրոցի ծնողական խորհուրդն ակտիվորեն համագործակցում է տնօրենության, մանկավարժական և աշակերտական խորհրդների հետ, կազմակերպում էքսկուրսիաներ, միջոցառումներ: Համայնքի ակտիվ մասնակցությունը դպրոցի շենքային պայմանների բարելավմանը, ուսումնանյութական բազայի հարստացմանը, տարբեր միջոցառումների և նպատակային էքսկուրսիաների հովանավորմանը | տղաների պասիվությունը: Արտերկրի դպրոցների հետ չհամագործակցելը | մասնակցելու և հիմնախնդիրները ներկայացնելու համար: Հուզող հարցերի շուրջ կազմակերպել համատեղ քննարկումներ, համաժողովներ: | |

***<u>Դպրոցում աշակերտների առաջադիմությունը և առաջխաղացումը</u>***

| ՈՒժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Դպրոցում տարբեր առարկաներից իրականացվող նախագծերին աշակերտների ակտիվ մասնակցություն: Բոլոր 3 աստիճաններում գերազանց առաջադիմությամբ սովորող աշակերտներ: Ոսկե մեդալի արժանացած | Մասնագիտական կողմնորոշման բացակայություն, առարկայական օլիմպիադաներին պասիվ մասնակցություն: 10-12-րդ դասարանների աշակերտների ցածր առաջադիմություն, անտեղի բացակայություններ: | Կազմակերպել և իրականացնել երկարօրյաներ, դասապատրաստում ներ, հաճախումների ամենօրյա ստուգումներ և ծնողների հետ քննարկումներ: Օլիմպիադաների մասնակիցների խմբերի ստեղծում, խրախուսանքի | Դասապատրաստ ման, երկարօրյայի մասնագետների բացակայություն: Մանկավարժների և սովորողների շահագրգռվածու թյան պակաս: Ծնողների պասիվություն Ֆինանսական միջոցների սակավություն |

| | | | |
|---|---|---|---|
| շրջանավարտ ունենալը: Մարզային առարկայական մրցույթում 1-ին տեղը զբաղեցրած աշակերտների թիմ Մարզային և հանրապետական առարկայական օլիմպիադաներում մրցանակների արժանացած սովորողների առկայություն | | տարբեր միջոցառումների և ձևերի կիրառում: | |

*__Աշակերտի կյանքի որակը__*

| ՈՒժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Հաստատությունում բժշկական սպասարկման համակարգի առկայություն: Աշակերտների սննդի կազմակերպման աշխատանքների իրականացում: Սանիտարական նորմերին համապատասխան դասացուցակի առկայություն: Աշակերտների ֆիզիկական, հոգևոր, սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրերի առկայություն: Արտադասարանական աշխատանքների | Ոչ բոլոր մանկավարժական աշխատողների կողմից առողջապահական տեխնոլոգիաների կիրառում: Ֆիզկուլտուրայի հատուկ խմբերի և անհատական ծրագրերի բացակայություն | Առողջապահական տեխնոլոգիաների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով ծնողների և մանկավարժների հետ սեմինարների անցկացում: Համապատասխան միջավայրի ստեղծման նպատակով սոցիալական գործընկերների, հովանավորների ներգրավվում: | Ընտանիքի անառողջ կենսակերպ, թույլ վերահսկողություն: Ծրագրային փոփոխություններ, չափորոշչային նոր պահանջներ, որոնց արդյունքում աշակերտների ծանրաբեռնվածության ավելացում: |

| | | | |
|---|---|---|---|
| համակարգման առկայություն: Սպորտային միջոցառումների անցկացում: Ֆիզիկական զարգացման, առողջ ապրելակերպի վերաբերյալ սեմինարների, բացատրական աշխատանքների իրականացում: Լրացուցիչ սպորտային միջավայրի առկայություն՝ բացօթյա խաղահրապարակ, ֆուտբոլի խաղադաշտ, տրինաժորների առկայությամբ բացօթյա տեղամաս: | | | |

*__Ներառական կրթություն և հավասարություն__*

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Դպրոցում իրականացվել և իրականացվում են ներառական կրթության կազմակերպմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում՝ մանկավարժների վերապատրաստումներ: Հաստատությունում առկա է աջակցությունների սենյակ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար: Դպրոցում աշխատում են ներառական | Դպրոցում ապահովված չէ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելիություն: Աջակցությունների սենյակի ոչ լիարժեք կահավորվածությունը: Արտադասարանական խմբակներում ԿԱՊԿՈՒ աշակերտների ընդգրկվածություն: Ծնողների | Տեսաֆիլմերի դիտում: Ներառական կրթությանն առնչվող զրույցների, սեմինարների կազմակերպում: Սոցիալական գործընկերների ներգրավում, ծրագրերի իրականացում: Սոց. անապահով ընտանիքներից աշակերտների համար աջակցության ծրագրերի | Ֆինանսական ռեսուրսների սղություն: Աշակերտների կողմից պասիվ վերաբերմունք: |

| | | | |
|---|---|---|---|
| կրթության թեմաներով վերապատրաստված մանկավարժներ: Դպրոցն ապահովում է ԿԱՊԿՈւ աշակերտների հետ հոգեբանամանկավարժական աջակցության թիմի աշխատանքը: Դպրոցն իրականացնում է երեխաների հավասար իրավունքներին նվիրված ուսումնական ծրագրեր: Հաստատությունն իրականացնում է սոցիալական ապահովության ծրագրեր | պասիվությունը աշակերտական խորհրդի աշխատանքներին: | կազմակերպում: Հանդուրժողականության ուղղված աշակերտների նախաձեռնությունների կազմակերպում | |

*__Շենքային պայմանները, նյութատեխնիկական բազան__*

| ՈՒժեղ կողմեր | Թույլ կողմեր | Հնարավորություններ | Վտանգներ |
|---|---|---|---|
| Դպրոցն ունի լավ շենքային պայմաններ, տարածքն առանձնացված է ցանկապատով, Կաթսայատան առանձին շինություն և լոկալ ջեռուցում, Անհրաժեշտ գույքով կահավորված հանդիսությունների դահլիճի և վերանորոգված մարզադահլիճի առկայություն | Դպրոցը չունի ապաստարան, Տարրական դպրոցի երկրորդ հարկի հատակը սալիկապատված չէ և գտնվում է ոչ բարվոք վիճակում, Արտաքին և ներքին հակահրդեհային ջրամատակարարում չունենալը, Բնագիտական առարկաների գծով առանձին լաբորատորիաներ չունենալը | Կազմակերպել քննարկումներ, ներկայացնել խնդիրները կառավարման խորհրդին, հրավիրել լիազոր մարմնի ներկայացուցիչներին, հետևողական աշխատանք տանել խնդիրներին պատշաճ լուծում տալու համար | Ֆինանսական միջոցների պակաս, պատկան մարմինների կողմից խնդիրներին լուրջ չվերաբերվելը, հնարավոր ֆորս - մաժորային իրավիճակներ |

## 11 . ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

| ՈԼՈՐՏ | ԽՆԴԻՐՆԵՐ |
|---|---|
| Ներառական կրթություն | Քարտեզագրել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտներին /եթե նրանք չեն հաճախում դպրոց, բերել դպրոց/, իրականացնել նրանց սոցիալականացումը: Ձևավորել սովորողի անձի զարգացմանը նպաստող կրթական միջավայր, հաղթահարել կրթական համակարգում առկա հիմնախնդիրները |
| Կառավարման խորհրդակցական մարմիններ | Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության ամրապնդում |
| Համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը | Աշակերտների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու կարողությունների զարգացում |
| Մանկավարժական համակազմ | Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների բարելավում, արդիականացում |
| Նյութատեխնիկական բազա | Աշակերտական գույքի, պահարանների և ժամանակակից լաբորատոր սարքավորումների ձեռք բերում, արդիականացնել դպրոցի նյութատեխնիկական բազան, որակյալ կրթություն իրականացնելու համար: Կենտրոնացնել առկա ռեսուրսները և առավել արդյունավետ տնօրինել դրանք |
| Տեխնոլոգիաներ և նորարարություն | Համակարգիչների և ժամանակակից տեխնոլոգիաների շարունակական ձեռքբերում, մեթոդների ներդրում, ուսումնական գործընթացում մեդիագրագիտության կարևորում և զարգացում |
| Սովորողների կրթության որակը | Զարգացնել սովորողների կարողունակությունները, ուշադրության կենտրոնում պահել աշակերտների համակողմանի դաստիարակությունը: Բարձրորակ կրթության առարկայական օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում |
| շենքային պայմաններ | Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում: Մոնտաժել հակահրդեհային ինքնաշխատ սարքավորումներ և հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցման համակարգ՝ ապահովելով հրդեհի տագնապի ազդանշանի փոխանցումը լիազոր մարմնի՝ ՀՀ ներքին |

| | |
|---|---|
| | գործերի նախարարության փրկարարական ծառայությանը («911» ծառայությանը): |

### 11.1. Զարգացման ծրագրի իրականացման ռիսկերն ու դրանց ազդեցությանն ուղղված գործողությունները

| ՌԻՍԿԵՐ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
|---|---|
| Մշակութային կարծրատիպեր | Ներմուծել նորը՝ Պահպանելով հինը |
| Նորամուծությունների դժվար ընդունում | Նորամաուծությունների աստիճանաբար ներմուծում |
| Ֆինանսներ | Գտնել հովանավորներ, ֆինանսական աղբյուրներ |
| Մոտիվացիայի ցածր մակարդակ | Քաջալերում, Խրախուսանք |

### 11.2. Դպրոցի գործունեության յուրաքանչյուր ոլորտի նպատակները և խնդիրները

**Սահմանված նպատակների և խնդիրների համապատասխան գործողությունները**

**Ծրագրի իրականացման ռիսկերը և դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունները**

*Ներառական կրթություն և հավասարություն*

*Նպատակ՝ Ներառական կրթության և հավասարության ապահովում*

**Խնդիր 1.ուսումնադաստիարակչական բոլոր գործընթացներում ապահովել սեռերի հավասարությունը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների, ազգային փոքրամասնությունների, սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների մասնակցությունը**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսնե ր* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| 1.ԿԱՊԿՈՒ աշակերտներին ընդգրկել աշակ. խորհրդի կազմում | Ուս.աշխ. գծով և ՄԿԱ գծով տեղակալներ, ԴԱԿ, հոգեբան | Սեպտեմբե ր | Մարդ. ռես.՝ ուսուցիչ ներ, աշակերտա կան խորհուրդ, | ԿԱՊԿՈՒ սովորողի դիմադրությո ւն | Անհատական աշխատանք |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | աշակերտներ, | | |
| 2. արտադասարանական միջոցառումներին և խմբակներին ապահովել սովորողների հավասար մասնակցությունը, ընդգրկել հավասար թվով աղջիկներ և տղաներ, ԿԱՊԿՈւ աշակերտներ, ազգային փոքրամասնություննեերի, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ | տնօրենի տեղակալներ, ԴԱԿ | Յուրաքանչյուր ուստարվա սեպտեմբերի 1 | Մարդ. ռես.՝ ԴԱԿ, դասղեկներ, խմբակների ղեկավարներ, Աշակերտներ: Նյութ. ռես.՝ խմբակի ծրագրեր, նյութեր | Աշակերտների պասիվություն, սեռերի անհավասարություն | Զրույցներ, բացատրական աշխատանք, իրականացնել վերահսկողություն |
| 4. ԿԱՊԿՈւ աշակերտներին ընդգրկել խմբակներում | ԴԱԿ | Սեպտեմբեր | Մարդ. ռես.՝ խմբակի ղեկավար, աշակերտներ | ԿԱՊԿՈւ աշակերտների պասիվ վերաբերմունք | Խրախուսում, քաջալերում |
| 6. Մանկավարժներին և վարչական աշխատողներին մասնակից դարձնել ներառական կրթության թեմաներով վերապատրաստումներին | տնօրեն | Ուսումնական տարվա ընթացքում | Մարդ. ռես.՝ հոգեբան, ուսուցիչներ, ուսուցչի օգնական | Ուսուցիչների պասիվություն | Բացատրական աշխատանք |
| 5. ԿԱՊԿՈւ աշակերտներին ընդգրկել երկարօրյա խմբերում | ՄԿԱ. գծով տեղակալ, ԴԱԿ | Սեպտեմբեր | Մարդ. ռես.՝ ուսուցիչներ, աշակերտներ | Ֆինանսների սղությություն | Դիմել տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնին |

**Արդյունքը՝**

Աշակերտների մոտ կձևավորվի.

1. պատասխանատվություն, կարգապահություն, հանդուրժողականություն, կբարձրանա սովորելու մոտիվացիան,

2. աշակերտը կցուցաբերի հետաքրքրվածություն սովորելու նկատմամբ և կկարևորի սովորելը,

3. ինքնուրույն կամ համատեղ կիրականացնի պարզ հետազոտական աշխատանքներ, կներկայացնի եզրակացություններ պարզ գիտական բառապաշարով,

4. կաջակցի մյուսներին, կստեղծի ընկերական հարաբերություններ, կձգտի կոնֆլիկտների խաղաղ լուծմանը,

5. տարրական և հիմնական դպրոցների ավարտական դասարանների աշակերտների մոտ կձևավորվեն հանրակրթական հիմնական ծրագրի Հանրակրթության պետական չափորոշչով և առանձին առարկաների չափորոշիչներով և ծրագրերով ամրագրված վերջնարդյունքների հիմնական պահանջներ.

6. կունենանք մասնագիտորեն կողմնորոշված, ակտիվ, օգնելու, ներուժը բացահայտած, աջակցելու, ապրումակցելու հատկանիշներով օժտված աշակերտներ:

Արդյունավետության չափանիշները. աշխատանքները կհամարվի բավարար, եթե՝

80% բացակայությունները լինեն բժշկի տեղեկանքի հիման վրա

Աշակերտների տարեկան միջին գնահատականներում գրանցվի աճ՝ «7» կամ «8»

Ավարտական և պետական ավարտական քննությունների միջին գնահատականը լինի «7» կամ «8»

Բուհ ընդունվողների թիվը ավելանա յուրաքանչյուր տարվա շրջանավարտների թվի 10-15%-ով

Գերազանցիկների թիվը ավելանա 10-15%-ով, հարվածայիններինը՝10%-ով

Արտադպրոցական և արտադասարանական միջոցառումներին մասնակցեն աշակերտների 80%-ը, որից՝ տղաներ 40 % ,աղջիկներ 40%, ազգային փոքրամասնությունների երեխաներ՝ 80 %, սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ 90 % ,ԿԱՊԿՈւ սովորողներ՝80%:

*Աշխատանքների վերահսկողությունը իրականացվում է մանկխորհի կողմից:*

***Շենքային պայմաններ***

***Նպատակ՝Հաստատության ուսումնական ֆիզիկական միջավայրի բարելավում, նոր մասնաշենքի ստեղծում: 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի միջանցքի սանիտարահիգիենիկ նորմերին չբավարարող, շարքից դուրս եկած մանրահատակով հատակի սալիկապատում:***

**Խնդիր 1Հետևողական լինել հաստատության նոր մասնաշենքի /ապաստարանով/ ստեղծումը ընդգրկել կառավարության ծրագրերի շարքում.**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսն եր* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| Դպրոցում կազմակերպել հանդիպում լիազոր մարմնի հետ, հրավիրել նաև համայնքի ղեկավարությանը ներկայացնել հիմնախնդիրները | Տնօրեն, համակարգող | 2023-2024թթ․ | Մարդկայի ն ռեսուրսնե ր՝աշխատ ակիցներ, ծնողներ | Մերժվել, չընդգրկվել: Անհաղթահ արելի դժվարությո ւններ | Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի |

**Խնդիր 2․ Նախագծման և կառուցման ընթացքում հետևողական լինել կաբինետային համակարգի, լաբորատորիաների ճիշտ հարմարեցմանը, աշխատանքների ժամանակին և որակով իրականացմանը․**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսն եր* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություննե ր* |
|---|---|---|---|---|---|
| 1․Նշանակել պատասխանատու կառուցման աշխատանքերին հետևողական լինելուն<br>2․Կառուցման ավարտին, ստուգել նախագծով նախատեսված կատարված աշխատանքների որակը, սահմանված պահանջներին համապատասխանո ւթյունը: | Ընդունող հանձնաժող ով, Համակարգ ող | Նախագծո վ և կառուցմա ն պայմանա գրով սահմանվ ած ժամկետ ներ | Մարդկայի ն ռեսուրսնե ր՝ տնօրեն, համակար գող, ծնողներ | Անորակ կատարված աշխատանք | Ժամանակին բացահայտել թերությունները և ներկայացնել շտկման |

**Խնդիր 3. 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի միջանցքի սալիկապատումը.**

| *Գործողություն* | *Պատաս* | *Ժամկետ* | *Ռեսուրսնե* | *Ռիսկեր* | *Ռիսկերին* |
|---|---|---|---|---|---|

| | *խանատու* | | *ր* | | *ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| 1․Քննարկել կառավարման խարհրդում, ներկայացնել լիազոր մարմնին, պատվիրել նախագիծ, կատարել անհրաժեշտ աշխատանքները | Տնօրենությու ն, համակարգո ղ, կառավարմա ն խորհուրդ, տնտեսվար | 2023-2025թթ | Մարդկայի ն ռեսուրսներ՝ տնօրեն, համակարգ ող, ծնողներ | Ֆինանսական միջոցների սղություն: Անորակ կատարված աշխատանք | Գտնել ֆինանսավորման աղբյուրներ: Անընդհատ հետևել կատարվող աշխատանքների որակին |

*<u>Արդյունքը</u>*՝

Բարեկարգ, ուսումնական հաստատության նորակառույց մասնաշենք ապաստարանով, որն ապահովված է նյութատեխնիկական ռեսուրսներով և ուսումնական գործընթացի իրականացման համար բոլոր պայմաններով, նպաստում է չափորոշչային պահանջներին համապատասխան ուսումնադաստիարակչական գործունեության իրականացմանն ու արդյունքների ապահովմանը:

Ինչպես դպրոցի միջանցքների հիմնական մասում, 1-ին մասնաշենքի 2-րդ հարկում ևս ունենալ սանիտարահիգիենիկ կանոնների պահանջներին համապատասխան սալիկապատ հատակ:

**Գնահատման ռուբրիկ**

| Կառուցումը և վերանորոգումը | Գերազանց | Լավ | Վատ | Ապահովված է ֆիզիկական մատչելիությունը | |
|---|---|---|---|---|---|
| | | | | Այո | Ոչ |
| Ապաստարան | | | | | |
| Դասասենյակներ | | | | | |
| Աշխարհագրության կաբինետ | | | | | |
| Ֆիզիկայի կաբինետ | | | | | |
| Կենսաբանության կաբինետ | | | | | |
| Ռազմագիտության կաբինետ | | | | | |
| Միջանցքներ | | | | | |
| Հանդիսությունների սրահ | | | | | |
| Հարմարեցված ֆիզիկական միջավայր | | | | | |
| 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի միջանցքի հատակ | | | | | |

*Դպրոցի կառավարման խորհրդին աշխատանքների իրականացման ընթացքում և վերջում ներկայացվում են հաշվետվություններ:*

**Նյութատեխնիկական բազա**

***Նպատակ՝ Դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրում***

**Խնդիր 1. Վերանորոգել և կահավորել դպրոցի գրադարանը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով, ուսումնաօժանդակ գրականությամբ, թվայնացնել գրադարանային ֆոնդը.**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսներ* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| 1. Դիմել կառավարման խորհրդին գնահատելու և սահմանելու գրադարանի վերանորոգման հարցը | Խորհուրդ, համակարգող | 2023-2024թթ | Ֆինանսական ռեսուրսներ, մարդ․ռես․ համակարգող, գրադարանավար | Ֆինանսների սղություն, ֆորս-մաժորային իրավիճակներ | Համայնքի և ծնողների աջակցություն: Դիմել բարեգործական կազմակերպություններին: |
| 2. Ձեռք բերել գեղարվեստական գրականություն, անհրաժեշտ ուսումնաօժանդակ գրականություն: | Համակարգող, գրադարանավար, ԴԱԿ | 2024-2025թթ | Ֆին. ռես. /պետ. բյուջե/ Մարդ.ռես., գրադարանավար, սովորողներ, նյութ. ռես.՝ կտորներ, անհրաժեշտ պարագաներ նավար. | Ֆինանսական միջոցների բացակայություն, Գրքերի ոչ ճիշտ ընտրություն | Նախապես անհրաժեշտ գրքերի ցանկի կազմում |
| 3. Ձեռք բերել անհրաժեշտ գույք և սարքավորումներ /համակարգիչ, էլեկտրոնային գրականություն/: Վերանորոգել առկա գրականությունը: Իիրականացնել «Տիկնիկային թատրոն» նախագիծը | | | | Սովորողների մոտիվացիայի պակաս Ժամանակի սղություն | Համայնքի և ծնողների աջակցություն Դիմել բարեգործական կազմակերպություններին: «Տիկնիկային թատրոն» նախագծի միջոցով ստեղծված ֆինանսական ռեսուրսներ |

**Խնդիր 2․ Կահավորել քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության կաբինետներն անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով**

| *Գործողություն* | *Պատասխանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսներ* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| 1․Ձեռք բերել քիմիայի, կենսաբանության և աշխարհագրության աշխատանքային նյութեր, սարքավորումներ | Համակարգող | 2024 թվականի ընթացքում | Ֆինանսական ռեսուրսներ, Մարդկային ռես․ բնագիտության ուսուցիչներ | Ֆինանսական միջոցների սղություն | Դիմել համայնքապետարանին, համայնքի բնակիչներին |
| 2․վերանորոգել առկա դիտակտիկ նյութերը | Բնագիտական առարկաների ուսուցիչներ | 2024 թվականի ընթացքում | մարդ․ ռես., նյութական ռես.՝ նյութեր, սովորողներ | Սովորողների պասիվություն | Քաջալերում, խրախուսում |
| 3․ստեղծել դիտակտիկ նյութեր,այդ թվում՝ էլեկտրոնային | | 2024 թվականի ընթացքում | նյութական ռես.՝ նյութեր, ՏՀՏ-ներ | | |

**Խնդիր 3․ Կահավորել դպրոցի աջակցությունների սենյակը ուսումնամեթոդական նյութերով և սարքավորումներով՝ տեսողության և լսողության գործառույթի բացակայության կամ սահմանափակում ունեցող աշակերտների համար**

| *Գործողություն* | *Պատասխանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսներ* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| Ձեռք բերել աջակցությունների սենյակի համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր, | Համակարգող | 2023-2025թթ | Ֆինանսական ռեսուրսներ, մարդ․ ռես․ Ուսուցչի | Ֆինանսների սղություն | Դիմել հկ-ների աջակցությանը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տեսողության և լսողության խնդիրներ ունեցող սովորողների համար սարքավորումներ | | | օգնական, հոգեբան, | | |

**Խնդիր 4. Կահավորել Դպրոցի համակարգչային կաբինետն անհրաժեշտ գույքով և սարքավորումներով**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսն եր* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| 1. Ձեռք բերել համակարգիչներ /նոթբուքներ/ | Համակարգ ող, ինֆորմատ իկայի ուսուցիչ | 2024-2025թթ | Ֆինանսա կան ռես. /պետ. բյուջե/ | Ֆինանսա կան միջոցների սղություն | Մասնակցություն դրամաշնորհային ծրագրերի |
| 2. Ստեղծել էլեկտրոնային նյութեր | | Ցուր. ուսումնակ ան տարվա ընթացքու մ | Մարդ. ռես. աշակերտ ներ, ՏՀՏ | Աշակերտն երի մոտիվացի այի բացակայու թյուն | Խրախուսում, քաջալերում |

**Խնդիր 5. Կահավորել ռազմագիտության դասասենյակն ու հրաձգարանը**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսն եր* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություններ* |
|---|---|---|---|---|---|
| Ձեռք բերել էլեկտրոնային հրաձգարան, նզպ առարկայի դասավանդման համար անհրաժեշտ դիդակտիկ նյութեր | Համակարգ ող | 2024-2025թթ | Ֆինանսա կան ռեսուրսնե ր, Մարդ. ռես., Ռազմագի տության ուսուցիչ, աշակերտ ներ | Ֆինանսակ ան միջոցների սղություն, | Գտնել հովանավորներ, դիմել բարեգործական կազմակերպությո ւնների, բարերարների |

Արդյունքը՝

1․ Անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով և սարքավորումներով համալրված աջակցությունների սենյակ տեսողության և լսողության խնդիրներ ունեցող աշակերտների համար

2․Անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով ապահովված կաբինետներ։

3․Աշակերտների մոտ անհրաժեշտ միջոցների հայթհայթման և խնդիրների լուծման կարողությունների և հմտությունների ձևավորում։

4․ Ուսումնաօժանդակ գրականությամբ, գույքով և սարքավորումներով հագեցած գրադարան, որտեղից կանոնավոր օգտվում են աշակերտները, ուսուցիչները և վարչական աշխատողները։

5․Համապատասխան գույքով և սարքերով հագեցած համակարգչային կաբինետ, որտեղ իրականացվում են էլեկտրոնային ռեսուրսներով հարուստ դասեր, գործնական և լաբորատոր աշխատանքներ, գիտելիքների ստուգում։

6․Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հեռանկարներ։

7․ Դպրոցը կունենա կահավորված ռազմագիտության կաբինետ և հրաձգարան, որտեղ կկազմակերպվի արդյունավետ դասաժամեր և գործնական աշխատանքներ

*Շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի համալրման աշխատանքների վերահսկողությունը իրականացվում է կառավարման խորհրդի կողմից։*

**Գնահատման ռուբրիկ**

| | Համալրված է անհրաժեշտ գույքով | | Եթե ոչ, գրել անհրաժեշտ սարքավորումները և նյութերը | Ուսումնա դիդակտիկ նյութեր | | Եթե ոչ, գրել անհրաժեշտ սարքավորումները և նյութերը | Դասերին արդյունավետ օգտագործվում է անհրաժեշտ նյութերը, սարքերը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Այո | Ոչ | | Այո | Ոչ | | Այո | Ոչ |
| Համակարգչային կաբինետ | | | | | | | | |
| Քիմիայի կաբինետ, լաբորատորիա | | | | | | | | |
| Կենսաբանության լաբորատորիա, կաբինետ | | | | | | | | |
| Աշխարհագրության կաբինետ, | | | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| լաբորատորիա | | | | | | | | |
| Լաբորատորիաներ, կաբինետներ | | | | | | | | |
| Ռազմագիտության կաբինետ | | | | | | | | |
| Գրադարան | | | | | | | | |
| Աջակցությունների սենյակ ԿԱՊԿՈւ աշակերտների համար | | | | | | | | |
| Դահլիճ | | | | | | | | |
| Պատմության կաբինետ | | | | | | | | |

*Դպրոցի աշակերտների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեությունն ու առողջությունը*

*Նպատակ՝ Աշակերտների և աշխատակազմի անվտանգ կենսագործունեության ու առողջության ապահովում*

**Խնդիր 1. Աշակերտների և աշխատողների ֆիզիկական, հոգևոր և սոցիալական առողջությանը միտված ուսումնադաստիարակչական ծրագրերի, միջոցառումների իրականացում.**

| *Գործողություն* | *Պատաս խանատու* | *Ժամկետ* | *Ռեսուրսնե ր* | *Ռիսկեր* | *Ռիսկերին ուղղված գործողություննե ր* |
|---|---|---|---|---|---|
| 1. Աշակերտների սննդի կազմակերպման ամենօրյա վերահսկողություն | Տնտեսվար, խոհարար | Սննդի կազմակեր պման ընթացքում | Խոհարար, համտեսող հանձնաժո ղով, | Անորակ սնունդ | Հետ վերադարձ մատակարարին |
| 2. Սանիտարական նորմերին համապատասխան դասացուցակի կազմում | Տնօրեն, ուս. աշխ. գծով տեղակալ | Ուր. ուս. տարվա մեկնարկին | Նյութական ռես.՝ իրավական ակտեր, ՏՀՏ | Սանիտարակա ն պահանջներից շեղումներ | Վերահսկել, Ստուգել, կատարել ուղղումներ. |
